

Հայկական ԽՍՀ ազգային գրականության միության

„ՀԱՅԿՈՂ“


Կենտրոնական հրատարակչություն

ՍՊԵՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
1939 Թ. ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

657

Ս-81

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Յ Կ Ո Ղ Ի
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 4 0



25 SEP 2010

Հայկական ԽՍՀ սպասարարական ընկերությունների միություն

«ՀԱՅԿՈՐՊ»

Կենտրոնական հաշվապահություն

Հ/Արմ.
3-44002
657
Ս-81

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
1939 Թ. ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ИИВ. № 15949

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ Ա Յ Կ Ո Ր Պ Ի
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1940



0103 132 28
18 SEP 2013

24. 851

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայկոսպի կենտրոնական հաշվապահութունը թարգմանաբար իջեցնելով ցանցին Ֆենտրոսոյուզի կողմից հրատարակված «Սպառողական ընկերությունների հաշվային պլանի հաշիվների համառոտ բնույթագիրը», Հայկոսպի սխտեմի հաշվային աշխատողների հիմնական մասսային՝ դյուրկոսպների և շրջկոսպների հաշվապահներին ու հաշվետարներին առաջին անգամ կարողանում է մատակարարել հաշվապահական հաշվառման ամբողջական մի ուղեցույց: Անշուշտ սա վերջնական չէ և միշտ կարող է կրել փոփոխումներ, բայց հետագայի այդ բոլոր հնարավոր փոփոխումներն ու լրացումները կուղարկվեն տեղերին տապալիր կամ ասպակետիս, այս ձեռնակն ամբողջացնելու համար:

«Սպառողական ընկերությունների հաշվային պլանի հաշիվների համառոտ բնույթագիրը» տեղերին ուղարկելուց հետո, Հայկոսպի կենտրոնական հաշվապահութունը կ'համարի միանգամայն անթույլատրելի անգամ ամենաանհաշիվները հաշվային պլանից և նրա այս կամ այն հաշվի բովանդակություն աղավաղումներն ու փոփոխումները՝ մասնավորապես «ապրանքների մուտքի և գնահատման», «ապրանքների իրացման», «շրջանառության ծախսերի», «անհարկությունների շահագործման» և «կորուստների ու կուտակումների» հաշիվներում դյուրկոսպների և շրջկոսպների մի մասում թույլ տրված աղավաղումները պետք է վերացվեն միանգամ ընդմիշտ և այդ հաշիվներին—ինչպես և մյուս բոլոր հաշիվներին—հաշվառումը պետք է կազմակերպվի սույն ուղեցույցով պահանջվող թղթակցումներին լրիվ համապատասխան: Նմանապես հաշիվների անալիտիկ հաշվառման կառուցման խնդրում վորոշ ողակներում գոյություն ունեցող քմահաճ ընտրությունը պետք է լիկվիդացիայի յենթարկվի հիմնովին. բոլոր հաշիվների անալիտիկ հաշվառումը պետք է կառուցվի բացառապես սույն ուղեցույցի առաջադրած

Թարգմանեցին և խմբագրեցին՝ Կ. Սարգսյան և Գ. Շահազարյան
Տեխնիկական խմբագիր՝ Ա. Ոհանյան
Սրբագրեց՝ Գ. Զրազացյանյան, կոնտրոլ սրբագրությունը կատարեց՝ Լ. Մուրաֆյան

Бланкоиздат а—5 09 4001/2303 39—12 тираж 800/95:

Գլավիլտ Ա.—2086. Պատվեր 841: տիրամ 500. Պետհրատի 1 տպարան Յերևան 1940



167-87

ձեվերով, վորոնք բազմացվում և ուղարկվում են ցանցին շրջապահոսով լուծվածները միջոցով:

Հայկոսպի կենտրոնական հաշվապահութունը յեղնելով այն դրուժյունից, վոր մեր սխտեմի հաշվարկին աշխատողները ճնշող մեծամասնութունը մեծ պահանջ և զգում տեսական պատրաստականության բարձրացման, ձեռնարկել և նաև բալանսային հաշվառման տեսության վերաբերյալ մի ձեռնարկի հրատարակմանը:

ՀԱՅԿՈՍՊԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1939 թ. ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(Շրջկոսպները և գյուղկոսպները)

Հաշիվները №№	Հաշվարկին պլանի հաշիվները անվանումը	Անալիտիկ հաշվառման կառուցումը
1	Իրամարկը	1. Իրամարկը կենտրոնական 2. Իրամարկը ձեռնարկություններում 3. Իրամական միջոցներ ճանապարհին
	Հաշվարկային հաշիվ Պետրանկում	1. Հաշվարկային հաշիվ Պետրանկում 2. Ընթացիկ հաշիվներ 3. Ակիբեդիտիվներ
3	Ապրանքների մուտք և զնահատում	1. Ապրանքներ ճանապարհին 2. Ապրանքների մուտք և զնահատում
4	Ապրանքներ մանրածախ ձեռնարկություններում	1. Ապրանքներ մազադիններում և խանութներում 2. Ապրանքներ թեյարաններում և բուֆետներում
5	Մթերման ապրանքներ	1. Մթերման ապրանքներ
6	Հավելումներ ապրանքների վրա	1. Հավելումներ ապրանքների վրա մանրածախ ձեռնարկություններում 2. Հավելումներ ապրանքների վրա թեյարաններում և բուֆետներում
7	Ապրանքների իրացում	1. Ապրանքների իրացում մանրածախ ձեռնարկություններում 2. Մթերման ապրանքների իրացում
	Շրջանառության ծախսեր	1. Շրջանառության ծախսեր ընդհանուր 2. Շրջանառության ծախսեր ըստ առևտրի 3. Շրջանառության ծախսեր ըստ մթերումների

Հաշիվ-ների № ՆՁ	Հաշվային պլանի հաշիվ-ներին անվանումը	Անալիտիկ հաշվառման կառուցումը
9	Դերբառները և կրեդիտորներ	<ol style="list-style-type: none"> 1. Անհաշիվ անձեր 2. Բանվորներ և ծառայողներ 3. Մատակարարները ըստ վճարման պահանջագրերի 4. Հաշվարկներ դյուղատնտեսական միջոցների և հումուրի հանձնողներին հետ 5. Տնտեսական կազմակերպություններ, հիմնարկներ և անձեր ըստ դանադան հաշվարկներին 6. Անձեր ըստ պակասումների 7. Մանր պակասորդներ, յենթակա գանձման ընդհանուր քաղաքացիական կարգով 8. Անձեր ըստ վրահաշվումների 9. Վիճելի ստանալիքներ (բացի մանրերից) ըստ այլ հաշվարկներին 10. Դեպիտոները ըստ դատարանի կամ արբիտաժի վորոշման (բացի մանրերից) ըստ վանումների (բացի այլ) 11. Ավանդներ ժամկետային և անժամկետ, ստացված մինչև 1 հունվարի 1938 թ. 12. Հատուկ ավանդներ փայտերերից շինարություն համար, ստացված մինչև 1 հունվարի 1937 թ.
10	Հաշվարկներ ՇՍՄ-ի- հետ	<ol style="list-style-type: none"> 1. Հաշվարկներ ՇՍՄ վարչություն հետ 2. Հաշվարկներ ՇՍՄ միջերման գրասենյակին հետ 3. Հաշվարկներ ՇՍՄ մյուս տնտեսաշվարկային ձեռնարկություններին հետ

Հաշիվ-ների № ՆՁ	Հաշվային պլանի հաշիվ-ներին անվանումը	Անալիտիկ հաշվառման կառուցումը
11	Ներքին հաշվարկներ	<ol style="list-style-type: none"> 1. Ներքին հաշվարկներ ըստ հատկացված միջոցների (հիմնական և շրջանառու): 2. Ներքին հաշվարկներ, յենթակա փոխ հատուցման
12	Փայտածուծներ աղբաբնակությունից	<ol style="list-style-type: none"> 1. Ըստ ցուցակագրված փայտերերի անձնական հաշիվներին 2. Ըստ ցուցակագրման շանցած փայտերերի անձնական հաշիվներին
13	Պարտատի արտադրանք արտադրական ձեռնարկություններում	<ol style="list-style-type: none"> 1. Առանձին անձնական հաշիվներն ըստ յուրաքանչյուր ձեռնարկության (ճաշարան, թխարան, հացի փուռ և այլն)
14	Փոխառվելություններ ըստացված	<ol style="list-style-type: none"> 1. Փոխառվելություններ ստացված շրջանառու միջոցների համար 2. Փոխառվելություններ ստացված շահագործման չհանձնված կապիտալները ու մեծի ֆինանսավորման համար 3. Փոխառվելություններ ստացված շահագործման հանձնված կապիտալները ու մեծի ֆինանսավորման համար 4. Փոխառվելություններ ըստ աղբարքաշահառու թխարան ընթացիկ վարկավորման 5. Փոխառվելություններ սեղոնային կուտակման և խրախուսման ապրանքների դիմաց 6. Փոխառվելություններ միջերման ապրանքների դիմաց 7. Փոխառվելություններ բլանկային 8. Այլ փոխառվելություններ 9. Փոխառվելություններ ժամկետին չվճարված

Հաշիվ- ների № №	Հաշվային պլանի հաշիվ- ների անվանումը	Անավտոմատ հաշվառման կառուցումը
15	Նյութեր	<ol style="list-style-type: none"> 1. Հումուշի և նյութեր արտադրութ- յան համար 2. Նյութեր անտեսական 3. Մանրաթեք և շուտ մաշվող գույք և արտահագուստ շահագործման մեջ 4. Կենդանիներ գերացվող և մատղաշ անասուններ
16	Ձեռնարկով յուններ շահագործում	<ol style="list-style-type: none"> 1. Առանձին անձնական հաշիվներ ըստ յուրաքանչյուր ձեռնարկովյան (ճաշարան, հացի փուռ, թեյարան և այլն) և ըստ վերամշակման յուրա- քանչյուր տեսակի
17	Ծախսեր ի հաշիվ հետագա գործառնությունների	<ol style="list-style-type: none"> 1. Ծախսեր գալիք ժամանակի 2. Ավարտված հիմնական նորոգում վարձված հիմնական միջոցների վրա 3. Ծրջանառություն ծախսեր ապրանք- ների մնացորդի վրա 4. Գերածախս յենթակա ծածկման հատուկ ֆոնդերի հաշվին
18	Ֆոնդեր	<ol style="list-style-type: none"> 1. Հիմնական ֆոնդ 2. Պահեստի ֆոնդ 3. Ամրադրացիոն ֆոնդ 4. Կադրերի պատրաստման ֆոնդ 5. Դիրեկտորական ֆոնդ (վարչության) 6. Այլ հատուկ ֆոնդեր
19	Ռեզերվ ըստ վիճելի ստա- նավիճանների	<ol style="list-style-type: none"> 1. Ռեզերվ վիճելի ստանալիքների ըստ պակասումների 2. Ռեզերվ ըստ այլ վիճելի ստանա- լիքների

Հաշիվ- ների № №	Հաշվային պլանի հաշիվ- ների անվանումը	Անավտոմատ հաշվառման կառուցումը
20	Կապիտալ ներդրումներ	<ol style="list-style-type: none"> 1. Նոր շինարարություն, ընդարձակում և վերակառուցում 2. Հիմնական միջոցների ձեռք բերում 3. Հիմնական նորոգումներ
21	Հիմնական միջոցներ	<ol style="list-style-type: none"> 1. Ծեփեր, կառուցումներ և անկա- րաններ 2. Մեքենաներ և սարքավորում 3. Փոխադրական միջոցներ և քաշող ուժ ա) մեքենայական բ) գուժային 4. Արտադրող անասուններ 5. Ինվենտար 6. Պաշարային հիմնական միջոցներ
22	Ուրիշներին տրամադրված միջոցներ	<ol style="list-style-type: none"> 1. Մուծումներ միասնական յերկարա- տեվ վարկավորման ֆոնդին (ՖՊԿ) 2. Մուծումներ ի հաշիվ պահեստի ֆոնդին 3. Մուծումներ կարգավորման ֆոնդին 4. Այլ մուծումներ հատուկ նշանակման 5. Արժեքավոր թղթեր 6. ՖժԿ ըստ յեկամտահարկի սզուս- ներից 7. Տրված փոխավումներ 8. Գումարներ յենթակա գույք գրման ի հաշիվ հիմնական ֆոնդի 9. Հատկացումներ զերեկտոր ֆոնդին հաշվետու տարվա ընթացքում

Հաշվի ների № №	Հաշվային պլանի հաշվի- ների անվանումը	Անալիտիկ հաշվառման կառուցումը
23	կորուստներ և կուտակում- ներ	<p>1. Ձանազան կորուստներ և կուտակումները ըստ հոդվածների</p> <p>ա) իրացված հավելում ըստ առևտրի</p> <p>բ) համախառն յեկամուտ մթերման աղբյուրներին իրացումից</p> <p>գ) հարկեր և տուրքեր (բացի շրջանառութային հարկից)</p> <p>դ) տուգանքներ և տույժեր ստացված</p> <p>ե) տուգանքներ և տույժեր վճարված</p> <p>զ) աղբյուրներին դներին իջեցում գնման արժեքից ցածր</p> <p>է) արժեքներին ավելցուկ, հայտնաբերված ինվենտարիզացիայի ժամանակ (բացի հիմնական միջոցներից)</p> <p>ը) ռեզերվացում վիճելի ստանալիքներին ըստ պակասումների</p> <p>թ) ռեզերվացում ըստ այլ վիճելի ստանալիքների</p> <p>ժ) կորուստներ այն ստանալիքներին դուրս գրումից ըստ պակասումների, վորոնց գանձումը մերժված և դատարանի կողմից</p> <p>ժա) կորուստներ այն ստանալիքներին դուրս գրումից ըստ այլ հաշվարկներին, վորոնց գանձումը մերժված և դատարանի կամ արբիտրաժի կողմից</p> <p>ժբ) կորուստներ վաղեմությունն անցած ստանալիքներին դուրս գրումից</p> <p>ժգ) կորուստներ անհուսալի պարտքերին դուրս գրումից վերադաս մարմիններին թույլտվությամբ, ըստ պակասումների</p>

Հաշվի ների № №	Հաշվային պլանի հաշվի- ներին անվանումը	Անալիտիկ հաշվառման կառուցումը
		<p>ժդ) նույնը՝ ըստ վատնումների</p> <p>ժյե) նույնը՝ ըստ այլ պարտքերի</p> <p>ժզ) կորուստներ գողութունից և կոզոպուտից</p> <p>ժե) կորուստներ անցած տարիներին, հայտնաբերված հաշվետու տարում</p> <p>ժը) յեկամուտներ անցած տարիներին, հայտնաբերված հաշվետու տարում</p> <p>ժթ) յեկամուտներ չոգտագործված հատուկ ֆոնդերին լիկվիդացիայից</p> <p>ի) յեկամուտներ չոգտագործված ռեզերվներին լիկվիդացիայից</p> <p>իա) մուտքեր անցած տարիներում անհուսալիության պատճառով ֆլեաներին մեջ դուրս գրված ստանալիքներից</p> <p>իբ) յեկամուտներ ժամկետանց կրեդիտորական պարտքերին լիկվիդացիայից</p> <p>իգ) կորուստներ տարերային ազեմներին</p> <p>իդ) յեկամուտներ նյութերին, տարաներին և հետնյութերին (ОТХОД) իրացումից</p> <p>իյե) հետևանքներ ձեռնարկների շահագործումից</p> <p>իզ) ներստեսային հատկացումներ</p> <p>իե) այլ կորուստներ</p> <p>իը) այլ կուտակումներ</p> <p>2. Ոգուտներ և ֆլեաներ հաշվետու տարվա</p> <p>3. Ոգուտներ և ֆլեաներ անցած տարիներին</p> <p>Անալիտիկ հաշվառումը կառուցվում է հիմնական միջոցներին հաշվին համապատասխան</p>
24	Հիմնական միջոցներին լիկվիդացիա	
25	Հիմն. միջոցներին մաշում	Ն ու յ ն ը

Հաշիվների № №	Հաշիվների անվանումը	Հաշիվների № №	Հաշիվների անվանումը
01	ԱՐՏԱԲԱՆԱՍՍՅՈՒՆ ՀԱՇԻՎՆԵՐ	02	Խլատ հաշվետվության բլանկների բաց թողում
03	Ապրանքներ (նյութեր) և պահ ընդունված	04	Կազմակերպություններ ըստ պահ ընդունված ապրանքների (նյութերի)
05	Կապալով վերցված հիմնա- կան միջոցներ	06	Կապալատուն

ԳՅՈՒՂԿՈՈՊՈՒՆԵՐԻ 1939 Թ. ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒՅԹԱԳԻՐԸ

ՀԱՇԻՎ № 1 «ԳՐԱՍԱՐԿ»

ՀԱՇԻՎ № 1-Ն ՈՒՆԻ 3 ՅԵՆԹԱՀԱՇԻՎՆԵՐ

1. դրամարկղ կենտրոնական
2. դրամարկղ ձեռնարկություններում
3. դրամական միջոցներ ճանապարհին

«Դրամարկղ կենտրոնական» յենթահաշիվում հաշվավում է դրամական գումարների շարժումն սղատողական բնիկությունների վարչությունների դրամարկղում:

«Դրամարկղ ձեռնարկություններում» յենթահաշիվում հաշվավում է դրամական միջոցների շարժումը ինքնուրույն բալանսի անցած ձեռնարկների դրամարկղում: Բացի դրանից, այդ յենթահաշիվում արտացոլվում են նաև ամսվա վերջին ինքնուրույն հաշիվեկրի շանցած ձեռնարկությունների դրամների մնացորդները, յեթե այդ մնացորդը խանութի վարիչի կողմից ներկայացված է ինվենտարիզացիայի անցկացման մոմենտին և հանձնված է կենտրոնական դրամարկղին հետևյալ ամսվա մեկին:

«Դրամական միջոցներ ճանապարհին» յենթահաշիվում արտացոլվում է գյուղկոոպի վարչությունը նրա ձեռնարկությունների կողմից փոխադրված, բաց դեռ կենտրոնական դրամարկղը կամ հաշվարկային հաշիվը մուտք չարված դրամական գումարները:

Հաշիվ №1 պարտադրվում է մուտք յեղած դրամական գումարներով, պահանջադրելով դանազան հաշիվներ և պահանջադրվում է ծախսված գումարներով, պարտադրելով դանազան հաշիվներ (նայած գործառնությունների բնույթին):

Դրամարկղային գործառնությունների ձեռնարկումը կա-

տարվում է տնտեսական դործառնությունները հաշվային փաստաթղթերով ձեռնարկելու կանոնների համապատասխան:

Կենտրոնական կամ ձեռնարկությունների դրամարկղներում յեղած դրամական միջոցները ինվենտարիզացրելու յեն յենթարկվում զիջ պակաս ամիսը մեկ անգամ:

Բոլոր դրամարկղ ունեցող ձեռնարկություններում պետք է տանել դրամարկղի մատյան, այդ մատյանը տանում է դանձապահը Յենտրոսոյուզի կողմից հաստատված ձևով:

Դրամարկղի մատյանում դրանցում են բոլոր մուտքի և յեւթի որդերները: Դրանցումը կատարվում է պատճենահան յեղանակով մատյանի յերկու թերթերի վրա, վորից մեկը կտրվում է: Դրամարկղը փակվում է ամեն որ: Որվա վերջին մուտքի և յեւթի փաստաթղթերի լրիվ դրանցումից հետո դուրս է բերվում մնացորդը, վորից հետո մատյանի կտրվող թերթը բոլոր սկզբնական փաստաթղթերով հանձնվում է հաշվապահությանը, վորը դրամարկղի հաշվետվության և փաստաթղթերի ստացման մասին ստորագրում է դրամարկղի յերկրորդ թերթի (տրմատի) վրա:

Դրամարկղի դրանցումները փաստաթղթերի հետ ստուգելուց հետո, հաշվապահությունը կազմում է այդ դրանցումների հիման վրա յերկու որադրային հոդվածներ (առանձին բառ դրամի մուտքի և յեւթի), վորպիսի հոդվածները դրանցման են յենթարկվում որպիսի մայր մատյանով և «դրամարկղ»-ի հաշվի ուժանդակ հաշվառման մատյանով:

Առանձին դանձապահ ունեցող մագաղիներում, յանութիւնում, ճաշարաններում դրամարկղի դրքի փոխարեն տարվում է դրամարկղային հաշվետվություն: Գանձապահ չունեցող մանրավաճառ առևտրական ձեռնարկներում դրամի հանձնումը դրանցվում է ապրանքա-դրամական հաշվետվության մեջ:

«Դրամարկղ» հաշվի մնացորդը կարող է լինել միայն դեբիտային:

ՀԱՇՎ № 2 «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎ ՊԵՏՐԱՆԿՈՒՄ»

Այս հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է հետևյալ 3 յենթահաշիվներով:

- 1. Հաշվարկային հաշիվ Պետ-բանկում:

2. Ընթացիկ հաշիվներ:

3. Ակկրեդիտիվներ:

Հաշիվ № 2 պարտադրվում է հաշվարկային հաշվին կամ ընթացիկ հաշվին մուտք յեղած դումարներով և պահանջադրվում է յեւթ յեղած դումարներով:

№ 2 հաշիվով դրանցումների համար հիմք են հանդիսանում Պետ-բանկից ստացված քաղվածքները: Այդ քաղվածքներին պետք է կցված լինեն բոլոր անհրաժեշտ սկզբնական փաստաթղթերը: Հաշիվը պարտադրվում է բոլոր մուտք յեղած դումարներով, պահանջադրելով դանազան համապատասխան հաշիվներ և պահանջադրվում է այդ հաշիվից վճարած դումարներով պարտադրելով նույնպես դանազան հաշիվներ, նայած դործանությունների բնույթին:

Պետ-բանկի (յնայդրամարկղի) քաղվածքների և դյուզկոոպների մատյանները դրանցումների մեջ յեղած տարբերությունը՝ առաջացած Պետ-բանկի (յնայդրամարկղի) սխալ դրանցումներից, արտացոլվում են № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշվի «տնտեսական կազմակերպություններ, հիմնարկներ և անձեր բառ ալլ հաշվարկներ» յենթահաշվում և անհատաղ ներկայացվում է Պետ-բանկին պրետենդիա, վերջինի կողմից քաղվածքում թույլ տրված սխալներն ուղղելու համար:

Այդպիսով դյուզկոոպի հաշվապահության կողմից դուրս բերված «հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշվի մնացորդը միշտ պետք է համապատասխանի Պետ-բանկի (յնայդրամարկղի) քաղվածքում ցույց տրված մնացորդին:

Պետ-բանկը (յնայդրամարկղը) կատարած սխալի ուղղման մասին նշում է կատարում հետևյալ քաղվածքում, վորի հիման վրա դյուզկոոպի հաշվապահությունն այդ սխալի ուղղումն արտահայտում է № 2 հաշվի դեբիտով կամ կրեդիտով և համապատասխանորեն № 9 հաշվի 5 յենթահաշվի դեբիտով կամ կրեդիտով, նայած սխալի բնույթին:

№ 2 հաշվում հաշվառվում են նաև դյուզկոոպների կողմից բացված ակկրեդիտիվները: Ակկրեդիտիվները բացելիս պարտադրվում է «ակկրեդիտիվներ» յենթահաշիվը պահանջադրելով «հաշվարկային հաշիվ Պետբանկում» յենթահաշիվը: «Ակկրեդիտիվներ» յենթահաշիվը պահանջադրվում է տրված դրամական

գումարներով, պարտադրելով դանազան հաշիվներ, իսկ վերա-
դարձված (չողտագործված) ակիրեղիտիվների համար՝ պար-
տադրելով «հաշվարկային հաշիվ Պետրանիում» յենթահաշիվը:

ՀԱՇԻՎ № 3 «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՈՒՑԲ ՅԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ»

Սպառողական ընկերություններում այս հաշիվով հաշվառ-
վում է ապրանքների ամբողջ մուտքը մանրալիցառու ձեռնարկու-
թյուններում, ստացված թե մատակարարներից, թե սեփական
արտադրական ձեռնարկներից և թե մթերման ապրանքների փո-
խանցումից: Այս հաշվում նաև արտացոլվում է ապրանքի դնա-
հատումը մինչև մանրածախ վաճառքի արժեքը:

«Ապրանքների մուտքի և դնահատման» անալիտիկ հաշվա-
ռումը տարվում է յերկու յենթահաշիվներով՝

1. Ապրանքներ ճանապարհին
2. Ապրանքների մուտք և դնահատում

Այն դյուրեղիտայինը, վերոնց շրջանառությունն ըստ այլ
քաղաքների մատակարարներից ստացվող ապրանքների աննշան
է, ամսվա ընթացքում «ապրանքներ ճանապարհին» յենթահաշ-
վով չեն ուղտվում, ձևակերպելով ապրանքների մուտքը անմիջա-
կանորեն «ապրանքների մուտքի և դնահատման» յենթահաշիվով
և փոխանցելով «ապրանքներ ճանապարհին» յենթահաշիվին մի-
այն ամսվա վերջին մնացորդը:

Հետևյալ ամսվա մեկին այդ մնացորդը նորից հետ է փո-
խանցվում «ապրանքների մուտքի և դնահատման» յենթահաշիվին:

Այն դյուրեղիտայինը, վերոնք ամսվա ընթացքում ուղտվում
են «ապրանքներ ճանապարհին» յենթահաշիվով, այս յենթահաշ-
վով ձևակերպում են այլաքաղաք մատակարարների ակցեպտված
հաշիվ-Ֆակտուրաների հիման վրա ապրանքների արժեքը (վճար-
ված կամ չվճարված), ներառյալ մատակարարների հաշվում
նշված բոլոր գումարները, այդ թվում տարա և մատակարարի
կողմից դյուրեղիտայինների հաշիվին կատարված փոխադրածախսերը:

«Ապրանքներ ճանապարհին» յենթահաշիվը պարտադրվում է
պահանջադրելով № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» կամ
№ 10 «հաշվարկներ շրջմիության հետ» հաշիվներն ըստ պատ-
կանելույնի:

Պահանջադրվում է փաստորեն ապրանքն ստանալուց՝ պար-
տադրելով «ապրանքների մուտք և դնահատում» յենթահաշիվը

մատակարարների հաշիվ Ֆակտուրայում նշված ապրանքի ար-
ժեքով, պարտադրելով № 8 «շրջանառության ծախսեր» հաշիվը
մատակարարի կողմից դյուրեղիտային հաշիվին կատարված փոխա-
դրական ծախսերի գումարով:

«Ապրանքներ ճանապարհին» յենթահաշիվի մնացորդը ցույց է
տալիս դյուրեղիտայինում մինչև ամսվա որը շտապված՝ ապրանքի
դնման արժեքը (վճարված կամ չվճարված):

«Ապրանքների մուտքի և դնահատման» յենթահաշիվը պար-
տադրվում է՝

ա) «Ապրանքներ ճանապարհին» յենթահաշիվի պահանջին
այլաքաղաք մատակարարներից ստացված ապրանքների դնման
արժեքով:

բ) № 10 «հաշվարկներ Շրջապառուկոպմիության հետ» հաշ-
վի պահանջին շրջմիությունից դնված ապրանքի արժեքով:

գ) № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվի պահանջին
նույնաքաղաք մատակարարներից դնված ապրանքների արժեքով:

Այս հաշիվով ձևակերպվում է նաև այլաքաղաք մատակա-
րարներից դնված ապրանքների արժեքն այն դեպքում, յերբ այդ
ապրանքների ստացման հաշվառումն ամսվա ընթացքում տար-
վում է ուղղակի «ապրանքների մուտքի և դնահատման» յենթա-
հաշիվով, առանց արտահայտվելու «ապրանքներ ճանապարհին»
յենթահաշիվում:

դ) № 16 «Ձեռնարկությունների շահագործում» կամ № 13
«սպառառատի արտադրանք արտադրական ձեռնարկություննե-
րում» հաշիվների պահանջին (ըստ պատկանելույնի), սեփական
արտադրական ձեռնարկություններից կամ վերամշակումից ստաց-
ված ապրանքների արժեքով, հաշիվելով նրանց արժեքն արտա-
դրական ձեռնարկությունների համար սահմանված բաց թող-
ման դներով կամ փաստացի ինքնարժեքով (վերամշակումից
ստացված ապրանքները):

յե) «Ապրանքների իրացում» հաշիվի («մթերման ապրանքնե-
րի իրացում» յենթահաշիվի) պահանջին մանրածախ ձեռնարկու-
թյուններին փոխանցված մթերման ապրանքների արժեքով:

զ) № 7 «Ապրանքների իրացում» հաշիվի «ապրանքների իրա-
ցում մանրալիցառու ձեռնարկություններում» յենթահաշիվի պա-
հանջին, չուկայում դնված և առևտրական ձեռնարկություններից

167-87



լանքների վաճառքի դումարներից վճարված ապրանքների արժեքով:

ե) № 6 «Հավելումներ ապրանքների վրա» հաշվի պահանջին մանրավաճառ ձեռնարկություններում մուտք յեղած ապրանքների դեման արժեքի վրա կատարված հավելման դումարով:

«Մուտքի դեմահատման» հաշվի վրա պահանջադրվում է մանրավաճառ ձեռնարկություններում մուտք յեղած ապրանքի վաճառքի արժեքով, պարտադրելով № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշվի:

Յեթե ամսվա ընթացքում ապրանքների մուտքը տարվում է «ապրանքներ ճանապարհին» յենթահաշվից անկախ, ապա «ապրանքների մուտքի և դեմահատման» յենթահաշվի վարտադրվում է մատակարարի հաշվի լրիվ դումարով, իսկ պահանջադրվում է՝

ա) Ստացված ապրանքի և տարաչի արժեքով— № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշվի պարտադրումով:

բ) Մատակարարների հաշվի մեջ մտցված գյուղկոտայի հաշվին կատարված փոխադրական ծախսերի դումարով, № 8 «ըբրձանառության ծախսերի» հաշվի պարտադրումով:

գ) Ապրանքների մուտքի ժամանակ հայտնաբերված պրետենզիաների համար— № 9 «դերխտորներ և կրեդիտորներ» հաշվի պարտադրումով և այլն:

ՀԱՇՎ № 4 «ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՆՐԱՎԱՃԱՌ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

«Ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշվի անարխտիկ հաշվառումն ունի հետևյալ յենթահաշիվները՝

1. Ապրանքներ մաղաղիններում և յանութներում
2. Ապրանքներ թեյարաններում և բուֆետներում

ՅԵՆԹԱՀԱՇՎ «ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՊԱԶԻՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Խանութներում և մաղաղիններում ապրանքները հաշվառվում են դումարային, մանրածախս վաճառքի դեբտով: Ոժանդակ հաշվառումը տարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի

(խանութների, կրպակների, վրանների, բաժինների վարիչներին) անձնական հաշիվներով:

Այս նույն հաշվով տարվում է նաև համաձայն ԽՍՀՄ ԺԿԽ-ի 19-ին փետրվարի 36 թ. № 319 և 25-ին մարտի 37 թ. № 495 վորդումների հիման վրա աշխատանքի վարձատրման հատուկ ձևի անցած մանրավաճառ առևտրի ցանցի հաշվառումը:

«Ապրանքներ յանութներում» յենթահաշվով դրանցումները կատարելու համար հիմք են հանդիսանում յանութի վարիչների հնգորչա ապրանքա-դրամական հաշվետվությունները, նրանց կցված փաստաթղթերով:

Ապրանքա-դրամական հաշվետվությունների կազմելու, ըստուղման և հաշվապահական մշակման կանոնները շարադրված են Յենտրոսոսյուզի 1937 թ. № 39 բյուլլետենում*):

Այսպիսով գյուղկոտայի հաշվապահի կողմից յանութների վարիչների անձնական հաշիվներով կատարված դրանցումները և դուբս բերված մնացորդները պետք է միշտ համապատասխանեն յանութների վարիչների կողմից ներկայացված և հաշվապահության կողմից ստուգված և ընդունված ապրանքա-դրամական հաշվետվությունների դրանցումներին և ապրանքների մնացորդներին:

Առանձին դանձապահ ունեցող մաղաղիններում և յանութներում «ապրանքներ յանութում» յենթահաշվով դրանցումները կատարվում են յանութների վարիչների ապրանքային հաշվետվությունների հիման վրա, վորին պետք է կցված լինեն ստուգված և պատշաճորեն հաստատված ապրանքային փաստաթղթերը:

«Ապրանքներ մաղաղիններում և յանութներում» յենթահաշիվը պարտադրվում է՝

ա) № 3 «ապրանքների մուտքի և դեմահատման» յենթահաշիվի պահանջադրումով, յանութի կողմից ընդունված ապրանքների վաճառքի արժեքով, յեթե այդ ապրանքները ստացված են մատակարարներից, գյուղկոտայի սեփական արտադրական ձեռնարկություններից, դնված են անմիջականորեն յանութի վարիչի կողմից և արժեքը վճարված է յանութի ապրանքների վաճառ-

*) Հայերեն լեզվով հրատարակված է առանձին բրոշյուրով և իջեցված է տեղերին: Ծանոթ. Հայկոտայի կենտ. հաշվապահություն

բի դումարներէից կամ թե փոխանցված և մթերման սպրանքներէից :

բ) № 6 «Հավելումներ ապրանքների վրա» հաշիվի սրահանջագրումով ապրանքների վաճառքի դների բարձրացման համար :

դ) № 23 «Կորուստներ և կուտակումներ» հաշիվի սրահանջվին— ինվենտարիզացիայի ժամանակ հայտնաբերված ապրանքների ավելցուկի արժեքով :

«Ապրանքներ խանութներում» յենթահաշիվը սրահանջագրվում է պարտագրելով հետևյալ հաշիվները՝

ա) № 7 «ապրանքների իրացում» հաշիվը (յենթահաշիվ «ապրանքների իրացում մանրավաճառ ձեռնարկություններում») — հնդորյակում վաճառքի դնով իրացված ապրանքների արժեքով :

բ) № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվը (յենթահաշիվ «անտեսական կազմակերպություններ, հիմնարկություններ և անձեր ըստ զանազան հաշիվների») կամ № 10 «հաշվարկներ շրջմիության հետ» հաշիվը (ըստ պատկանելույն) — մատակարարներին վերադարձված ապրանքների դնման արժեքով :

դ) № 6 «Հավելումներ ապրանքների վրա» հաշիվը — մատակարարներին վերադարձված ապրանքների վրա կատարված մանրածախի հավելման դումարով :

դ) № 15 հաշիվը (յենթահաշիվ «հումուլթ և նյութեր արտադրության համար») սեփական արտադրական ձեռնարկություններին տրված ապրանքների դնման արժեքով :

յե) № 6 «Հավելումներ ապրանքները վրա» հաշիվը սեփական արտադրական ձեռնարկություններին տրված ապրանքների վրա կատարված մանրածախի հավելման դումարով :

դ) № 8 «շրջանառության ծախսեր» հաշիվը կորուստներ ապրանքների պահպանման և վաճառման ժամանակ, հոգվածով այն ապրանքների պակասորդի դնման արժեքով, վորոնք դուրս են դրելով նյութապես պատասխանատու անձի հաշիվից բնական պակասորդի նորմայի սահմաններում, ինչպես նաև տարա-

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սեփական արտադրական ձեռնարկություններին փոքր քանակով ապրանք տալու դեպքում «հումուլթ և նյութեր արտադրության համար» յենթահաշիվը պարտագրվում է ապրանքների վաճառքի դներով :

յի սխալ քաշից առաջացած ապրանքի կորուստի դնման արժեքով, վորն ընդունվում է դյուղկոտպի հաշիվին :

ե) № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվը, յենթահաշիվ «անձեր ըստ պակասորդների» (բացի մանրներից) կամ համապատասխանորեն յենթահաշիվ «անձեր ըստ մանր պակասորդների» — յենթակա վանձման ընդհանուր քաղաքացիական կարգով սահմանված բնական պակասորդի նորմայից ավելի ապրանքների պակասորդի վաճառքի արժեքով :

ը) № 9 հաշիվը (յենթահաշիվ «անձեր ըստ վրահաշիվումների») — նյութապես պատասխանատու անձի հաշիվին դրանցվող խոտան, փչացած, կոտրած ապրանքների արժեքով :

թ) № 8 «շրջանառության ծախսեր» հաշիվը (հոգված «ապրանքների կորուստներ պահպանման և վաճառքի ժամանակ») — վոյ նյութապես պատասխանատու անձի մեղքով կոտրված, փչացած, խոտան ապրանքների դնման արժեքով :

ժ) № 6 «Հավելումներ ապրանքների վրա» հաշիվը — ապրանքների դների իջեցման դումարով հավելումների սահմաններում :

ժա) № 6 «Հավելումներ ապրանքների վրա» հաշիվը — ապրանքների փչացման, կոտրվածի և խոտանի մասին կազմված արձանագրությունով շրջանառության ծախսերով դուրս դրված ապրանքի հավելման դումարով :

ժբ) № 23 «Կորուստներ և կուտակումներ» հաշիվը — ապրանքների դնման արժեքից ցածր դների իջեցման դումարով :

ժդ) № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվը (յենթահաշիվ «անտեսական կազմակերպություններ, հիմնարկներ և անձեր ըստ զանազան հաշիվարկների») — ապրանքների դների իջեցման այն դումարը, վորը փոխհատուցվում է ԾԺԿ-ի մարմինների կողմից :

«Ապրանքներ մագաղիններում և խանութներում» յենթահաշիվը պարտագրվում է սրահանջագրվում է ապրանքների վաճառքի արժեքով մանրածախ մի ձեռնարկությունից մի ուրիշ ձեռնարկության հանձնելիս (յեթե այդ յերկու առևտրական ձեռնարկություններն ել հաշվառվում են մեկ ընդհանուր հաշվեկշռով) :

Յեթե առևտրական ձեռնարկություններից մեկը՝ բաց թողնողը կամ ստացողը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռով, ա-

պա ապրանքների ներքին փոխադրումը նման դեպքերում ձևա-
կերպովում է № 11 «ներքին հաշվարկներ» (յենթահաշիվ «ներ-
քին հաշվարկներ յենթակա փոխհատուցման») հաշվի միջոցով:

«Ապրանքներ մագաղիններում և խանութներում» յենթահաշ-
վով չեն կարող հաշվառվել դյուղիտուպի կողմից պահպանման ըն-
դունված ապրանքները, այդպիսի ապրանքները հաշվառվում են
№ 03 արտաբալանսային հաշվով («արժեքներ ընդունված պահ-
պանման համար») (պարզաբանումը տես այս գրքի վերջում):

«Ապրանքներ խանութներում» յենթահաշվի մնացորդը կարող
է լինել միայն դերխտային և ցույց է տալիս նյութապես պատաս-
խանատու անձի մոտ առհաշիվ յեղած ապրանքների մնացորդը:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՊՐԱՆՔՆԵՐ ԹԵՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՄ- ՖԵՏՆԵՐՈՒՄ»

Այս յենթահաշիվով դյուղիտուպներում հաշվառվում են թեյա-
րաններում և բուֆետներում գտնվող ապրանքները: Թեյարանների
և բուֆետների ապրանքների հաշվառումը տարվում է մանրածախս
վաճառքի դներով՝ դումարային, ըստ նյութապես պատասխանա-
տու անձերի— առանձին:

Այս յենթահաշիվը պարտադրվում է պահանջադրելով՝

ա) № 9 կամ 10 հաշիվները մատակարարներից ստացված ապ-
րանքների գնման արժեքով:

բ) № 16 «ձեռնարկությունների շահագործում» կամ № 13
«պատրաստի արտադրանք արտադրական ձեռնարկություններում»
հաշիվները (ըստ պատկանելույն) — ճաշարանից խոհանոցից կամ
դյուղիտուպի այլ արտադրական ձեռնարկություններից ստացված
ապրանքների և մթերքների գնման արժեքով: 1

գ) «Ապրանքներ մագաղիններում և խանութներում» յեն-
թահաշիվը դյուղիտուպի ինքնուրույն բալանսի չանցած խանութ-
ներից ստացած ապրանքների գնման արժեքով:

դ) № 11 «ներքին հաշվարկներ» հաշիվը (յենթահաշիվ «ներ-
քին հաշվարկներ յենթակա փոխհատուցման») — դյուղիտուպների
ինքնուրույն բալանսի անցած խանութներից, մթերման և ար-
տադրական ձեռնարկներից ստացված ապրանքների արժեքով:

յե) № 7 հաշիվ «իրացում մթերման ապրանքների» յենթա-
հաշիվը թեյարաններին և բուֆետներին վաճառելու համար հան-
ձնված մթերման ապրանքների արժեքով:

զ) № 6 հաշիվը (յենթահաշիվ «հավելում թեյարանների և
բուֆետների ապրանքների վրա») — թեյարաններից և բուֆետ-
ներից իրացվող ապրանքների հավելումով:

ե) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը — ին-
վենտարիզացիայի ժամանակ թեյարաններում և բուֆետներում
հայտնաբերված ապրանքների ավելցուկի արժեքով:

«Ապրանքներ թեյարաններում և բուֆետներում» յենթահա-
շիվը պահանջադրվում է պարտադրելով:

ա) № 16 «Ձեռնարկությունների շահագործում» հաշիվը թե-
յարաններից և բուֆետներից իրացված ապրանքների վաճառքի
արժեքով:

բ) «անձեր ըստ պակասումների (բացի մանրերից)» կամ
«անձեր ըստ մանր պակասումների, յենթակա դանձման ընդհա-
նուր քաղաքացիական կարգով» յենթահաշիվները (ըստ պատկա-
նելույն) — բնական պակասորդի սահմանված նորմայից ավելի
բարձր ապրանքների պակասորդի արժեքով:

գ) № 16 հաշիվը — բնական պակասորդի նորմաների սահ-
մաններում ապրանքի պակասորդի գնման արժեքով միաժամա-
նակ № 6 հաշիվը (յենթահաշիվ «հավելումներ թեյարաններին
ու բուֆետների ապրանքների վրա») — այդ նույն ապրանքներին
վերաբերվող հավելումների դումարով:

դ) «անձեր ըստ վերահաշվումների» յենթահաշիվ պարտքին
նյութապես պատասխանատու անձերի հաշիվին փոխանցված մի-
ջացած, խոտան և կտորատված ապրանքների վաճառքի արժե-
քով:

յե) № 16 «Ձեռնարկությունների շահագործում» հաշիվը
(ըստ համապատասխան թեյարանի կամ բուֆետի անձնական
հաշիվի) — դյուղիտուպի հաշիվին ընդունված թեյարաններում և
բուֆետներում միջացած, խոտան կամ կտորատված ապրանքների
գնման արժեքով և միաժամանակ № 6 հաշիվ պարտքին (յենթա-
հաշիվ «հավելումներ թեյարանների և բուֆետների ապրանքնե-
րի վրա») — այդ նույն ապրանքների հավելումների դումարով:

Թեյարանների և բուֆետների հաշվառման կարգի մասին
մանրամասն ցուցմունքներ տրված են Ֆեյտորոսյուզի Հաշվառ-
ման և Հաշվետվութայն բաժնի կողմից հասարակական սննդի
ձեռնարկությունների հաշվառման մասին 1938 թվին հրատա-
րակված հրահանգի մեջ:

ՀԱՅԻՎ № 5 «ՄԹԵՐՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ»

Մթերման ապրանքները հաշվառվում են դնման (մթերման) գներով ըստ գումարի, մթերման տեսակների և նյութական պատասխանատվութուն կրող անձերի:

Մթերման ապրանքների հաշվառումը հաշվապահութունում կատարվում է համաձայն նյութական պատասխանատվութուն կրող անձերի կամ մթերման կայանների վարիչների կողմից ներկայացված հնդորյա մթերային հաշվետվութունների և այդ հաշվետվութուններին կցվում է պատշաճորեն ստորագրված և հաստատված սկզբնական փաստաթղթերը:

Մթերման ապրանքների քանակային հաշվառումը գյուղ-կոտայների հաշվապահութուններում տարվում է միայն այն ապրանքների վերաբերմամբ, վորոնց մթերումը տվյալ շրջանի համար հանդիսանում է հիմնական կամ անկախ մթերման չափից—ունի ընդհանուր պետական նշանակություն (հաց, միս, կարտոֆիլ, բանջարեղեն և այլն): Այն մթերման ապրանքների ցուցակը, վորոնց հաշվառումը գյուղկոտայներում պետք է տարվի քանակապայմանային կարգով, վորոշվում է շրջապատկոտպիության վարչության կողմից և հաստատվում է հաշվառման և հաշվետվության բաժնի և հանրապետական սպառկոտպիության մթերման բաժնի կողմից: Այլ մթերման ապրանքներն ըստ հիմնական տեսակների հաշվառվում են միայն գումարով (որինակ, փախս-փուլուս, դեղատեխնիկական հումույթ, մետաղների կտորտանք, վորսկոր և այլն): Կայանի վարիչը քանակային հաշվառումը տանում է հատուկ մատյանով (առանց գումարի):

Մթերման ապրանքներ են համարվում կոլխոզներից, կոլխոզիկներից և անհատական տնտեսութուններից գյուղկոտպների կողմից մթերվող գյուղատնտեսական մթերքները և հումույթը, նույնպես և տեղական անայնազործական արդյունաբերական այն պատրաստի արտադրանքները, վորոնք յենթակա յեն վաճառքի մանրավաճառ առևտրական ցանցում և հասարակական սննդի ձեռնարկութուններում:

«Մթերման ապրանքներ» յենթահաշիվը պարտադրվում է՝
ա) № 1 «գրամարկդ» հաշվի պահանջին— գրամարկդից մթերման ապրանքների արժեքի վճարված գումարով:

բ) № 9 «դերխոտորներ և կրեդիտորներ» հաշվի («առհաշիվ

անձինք» յենթահաշիվը) պահանջին— մթերման ապրանքների արժեքը մթերող դործակալի առհաշիվ գումարներից վճարելու դեպքում:

գ) № 9 «դերխոտորներ և կրեդիտորներ» հաշվի («հաշվարկներ գյուղատնտեսական մթերքներ և հումույթ հանձնողների հետ» յենթահաշիվը) պահանջին— հանձնողներից պայմանագրերի կատարման կամ վոչ կանխիկ հաշվարկի կարգով ընդունված մթերման ապրանքների արժեքով:

դ) № 7 «ապրանքների իրացում» հաշվի («ապրանքների իրացում մանրավաճառ ձեռնարկութուններից» յենթահաշիվ) պահանջին— մթերման ապրանքի արժեքը վաճառողի կողմից վաճառքի գումարից վճարելու դեպքում, յեթե տվյալ իսնույթում դանձապահ չկա:

յե) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պահանջին ինվենտարիզացիայի ժամանակ հայտնաբերված մթերման ապրանքների ավելցուկի գումարով:

«Մթերման ապրանքներ» յենթահաշիվը պահանջադրվում է՝

ա) № 7 հաշվի յենթահաշիվ «մթերման ապրանքների իրացում» պարտքին— իրացված (ներառյալ նաև սեփական մանրավաճառի և հասարակական սննդի ձեռնարկութուններին հանձնված) մթերման ապրանքների դնման (մթերման) արժեքով:

բ) № 16 «ձեռնարկութունների շահադործում» հաշվի պարտքին արտադրական ձեռնարկութուններին վերամշակման համար հանձնված մթերման ապրանքների դնման (մթերման) արժեքով:

Մթերման ապրանքների պակասորդը, փչացումը, խտանը և կտրվածքները ձեակերպվում են «ապրանքներ մազաղիններում և խանութներում» յենթահաշիվի բնութագրման մեջ նշված յեղանակով:

ՀԱՅԻՎ № 6 «ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ»

№ 6 հաշիվի հաշվառվում է մանրավաճառ ձեռնարկութուններում ապրանքների վաճառքի և դնման արժեքների տարբերությունը:

№ 6 հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է 2 յենթահաշիվներով:

1. Հավելումներ մանրավաճառ ձեռնարկություններէ ապրանքների վրա:

2. Հավելումներ թեյարանների և բուֆետների ապրանքների վրա:

№ 6 Հաշիվը— պատսիվային և և հետևապես կարող և ունենալ միայն կրեդիտային մնացորդ:

№ 6 Հաշիվը պահանջադրվում է՝

ա) № 3 «ապրանքների մուտքի և դնահատման» հաշիվի պարտքին— խանութները մուտք արված ապրանքների սկզբնական հավելման դումարով:

բ) № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշիվի պարտքին (յենթահաշիվ «ապրանքներ մազաղխներում և խանութներում») — խանութների ապրանքների վրա կատարված լրացուցիչ հավելումների դումարով:

գ) № 4 հաշիվի պարտքին (յենթահաշիվ «ապրանքներ թեյարաններում և բուֆետներում») — թեյարանների և բուֆետների ապրանքների վրա կատարված սկզբնական և լրացուցիչ հավելումների դումարով:

№ 6 հաշիվը պարտադրվում է՝

ա) № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշիվի պահանջին— հավելումների սահմաններում կատարված ապրանքների դների իջեցման համար մատակարարներին վերադարձված ապրանքների վրա կատարված հավելման դումարով, արտադրական ձեռնարկություններին հանձնված ապրանքներին վերաբերվող հավելումով և շրջանառութային ծախսերով գնման արժեքով դուրս գրված ապրանքների հավելումով (արձանադրված կորուստներ, բնական պակասորդի նորմաների սահմաններում առաջացած պակասորդներ և այլն):

բ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվի պահանջին (հոդված «իրացված հավելում ըստ առևտրի») — ամեն ամիս ըստ առևտրական ձեռնարկությունների իրացված հավելման դումարով և «հետևանքներ ձեռնարկությունների շահագործումից» հոդվածի պահանջին— նույնպես ամեն ամիս թեյարանների և բուֆետների իրացված ապրանքներին վերաբերվող իրացված հավելման դումարով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Իրացված հավելման դումարի հաշվարկման կարգի մասին տես № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվի պարտադրման մեջ արված ցուցմունքները:

ՀԱՇԻՎ № 7 «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ»

№ 7 հաշիվով հաշվառվում են մանրավաճառ ձեռնարկությունների վաճառքի և մթերման ապրանքների վաճառքի շրջանառությունները:

Այս հաշիվին կից անալիտիկ հաշվառման մեջ տարվում են 2 յենթահաշիվներ՝

1. ապրանքների իրացում մանրավաճառ ձեռնարկություններում:
2. մթերման ապրանքների իրացում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ ՄԱՆՐԱՎԱՃԱՌ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»:

Այս յենթահաշիվը պահանջադրվում է իրացված ապրանքների վաճառքի արժեքով այդ ապրանքների վաճառքից դուրսացած դրամները կամ վաճառքի հաշիվին կատարված ծախսերի փաստաթղթերը ստանալիս:

ա) № 1 «դրամարկղ» հաշիվի պարտքին— վաճառքից դուրսացած դումարը դրամարկղը մուծելու դեպքում:

բ) № 2 «հաշվարկային հաշիվ Պետ-րանիում» հաշիվի պարտքին— վաճառքից դուրսացած դումարը հաշվարկային կամ բնութացիք հաշիվին մուծելու դեպքում:

գ) № 3 «ապրանքների մուտք և դնահատում» հաշիվի պարտքին— վաճառքի դումարից դնված ապրանքի արժեքը վերադարձման դեպքում:

դ) № 8 «Շրջանառութային ծախսեր» հաշիվի պարտքին— ապրանքների վաճառքից դուրսացած դումարից կատարված ծախսերի դումարով:

յե) № 5 «Մթերման ապրանքներ» հաշիվի պարտքին— մթերման ապրանքների արժեքը վաճառքի դումարից վճարելու դեպքում:

Այս յենթահաշիվը պարտադրվում է հնդորյակներով հիմք ունենալով վաճառողի հնդորյակ ապրանքա-դրամական հաշվետվությունները կամ դանձապահ ունեցող խանութների ապրանքների հաշվետվությունը, պահանջադրվով № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշիվը:

«Ապրանքների իրացում մանրավաճառ ձեռնարկություններին»
րից» յենթահաշիվը ամսվա վերջին մնացորդ չի ունենում:

ՅԵՆԹՍԱՀԱՇԻՎ «ՄԹԵՐՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ»

Այս յենթահաշիվը պահանջադրվում է մթերման ապրանքների բացթողման արժեքով պարտազրկելով հետևյալ հաշիվները՝

ա) № 10 «Հաշվարկներ շրջադառուցումից յենթահաշիվը (յենթահաշիվ «Հաշվարկներ շրջմիության մթերման գրասենյակի հետ») — մթերման գրասենյակին հանձնված մթերման ապրանքների բաց թողման արժեքով:

բ) № 9 «Գեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվը (յենթահաշիվ «անտեսական կազմակերպություններ և անձեր ըստ դանազան հաշվարկների»)՝ այլ կազմակերպություններին հանձնված մթերման ապրանքների բաց թողման արժեքով:

գ) № 3 «ապրանքների մուտք և պահպանում» հաշիվը — դյուղիտոսյան սեփական առևտրական ձեռնարկություններին վաճառքի համար հանձնված մթերման ապրանքներին բաց թողնուման արժեքով:

դ) № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում» հաշիվը (յենթահաշիվ «ապրանքներ թեյարաններում և բուֆետներում») — բուֆետներին և թեյարաններին վաճառքի համար հանձնված մթերման ապրանքների բացթողման արժեքով:

Այս յենթահաշիվը պարտադրվում է պահանջադրելով՝

ա) № 5 «Մթերման ապրանքներ» հաշիվը իրացված մթերման ապրանքների դնման (մթերման) արժեքով:

բ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը («համախառն յեկամուտ մթերման ապրանքների իրացումից») — ամեն ամսվա վերջին իրացված մթերման ապրանքների բաց թողման և դնման (մթերման) արժեքի տարբերության դումարով:

«Մթերման ապրանքների իրացում» յենթահաշիվը ամսվա վերջին մնացորդ չի ունենում:

№ 8 հաշիվը հաշվառվում են մանրավաճառ առևտրական ձեռնարկությունների և մթերման ապրանքների դնման, պահպանման և իրացման հետ կապված ծախսերը:

Շրջանառության ծախսերի անալիտիկ հաշվառումը տարվում է հետևյալ յենթահաշիվներով՝

1. Շրջանառության ծախսեր ընդհանուր:
2. Շրջանառության ծախսեր ըստ առևտրի:
3. Շրջանառության ծախսեր ըստ մթերմանների:
4. Շրջանառության ծախսեր ըստ արտադրական ճյուղերի:

Հաշվառման ոժանդակ մատյանում յուրաքանչյուր յենթահաշիվում տարվում է առանձին հաշվառում ըստ ծախսերի հոդվածների համաձայն շրջանառության ծախսերի հաստատված նորմենկլատուրայի:

Ծախսերը այս կամ այն շրջանառության ծախսերի հոդվածներին գրանցելիս կամ դյուղիտոսյան սեփական դործունեյության դանազան ճյուղերի միջ բաշխելիս, անհրաժեշտ է ղեկավարվել շրջանառության ծախսերի հաշվառման վերաբերվող հրահանգով և յեռամոյակային հաշվետվությունների կազմելու մասին Յենտրոսոյուղի կողմից իջեցրած տեխնիկական ցուցմունքներով:

№ 8 «շրջանառության ծախսեր» հաշիվը պարտադրվում է հաշվառված կամ փաստացի կատարված ծախսերի դումարով, պահանջադրելով № 1 «դրամարկղ», № 2 «հաշվարկային հաշիվ», № 9 «գեբիտորներ և կրեդիտորներ» և այլ հաշիվների նայած դործառնության ընույթին:

Հաշիվ № 8 պահանջադրվում է ամսվա վերջին № 17 հաշիվի պարտքին (յենթահաշիվ «շրջանառության ծախսեր ապրանքի մնացորդի վրա») — մնացորդ ապրանքների վրա ընկնող ծախսերով ըստ հետևյալ հոդվածների «յերկաթուղու և ջրային տրանսպորտ», «ավտոգույքային տրանսպորտ», «ապրանքների նախամշակման, տեսակավորման և փաթեթման ծախսեր», «տարայի կորուստ» և «ապրանքների կորուստ հանապարհին»:

Ապրանքները մանրավաճառ ձեռնարկություններից արտադրական ձեռնարկություններին հանձնելիս (դնման արժեքով),

փոխանցվում է միաժամանակ և վերահիշյալ հոգվածներով շրջանառության ծախսերի այն մասը, իրը վեարբերվում է հանձնված ապրանքներին, այդ փոխանցումը կատարվում է պարտադրելով № 15 «Նյութեր» հաշիվը և պահանջադրելով № 8 «Շրջանառության ծախսեր» հաշիվը:

Բացի այդ, № 8 հաշիվը պահանջադրվում է տարվա վերջին № 23 (յենթահաշիվ «Կուտակներ և վնասներ հաշվետու տարվա») հաշվի պարտքին — տարվա ընթացքում կատարված բոլոր շրջանառության ծախսերի ընդհանուր գումարով:

ՀԱՇԻՎ № 9 «ԳԵՐԻՏՈՐՆԵՐ ՅԵՎ ԿՐԵԳԻՏՈՐՆԵՐ»

Այս հաշվում հաշվառվում են գյուղկոտայի հաշվարկները բոլոր կազմակերպությունների հետ, բացառությամբ այն Շրջապատկոտայիության, իրի սխտեմի մեջ մտնում է ավյալ գյուղկոտայը:

«Դերիտորներ և կրեդիտորներ» հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է հաշվային պլանի մեջ ցույց տրված յենթահաշիվներով:

Յուրաքանչյուր յենթահաշիվ ներսում, յուրաքանչյուր կազմակերպության և անձի համար բաց է արվում առանձին անվանական հաշիվ:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՌՀԱՇԻՎ ԱՆՁՆԵՐ»

Այս յենթահաշվում հաշվառվում են ուղերատիվ նպատակներով, կամ վարչատնտեսական ծախսերի կատարման համար կանխույժներ ստացող գյուղկոտայի աշխատակիցների հաշվարկները: Այս յենթահաշիվում հաշվառվում է նաև կոլխոզի միջերդներին կամ կոտլերացիայի հավաքարձներին նրանց կողմից միջերված ապրանքի արժեքը վճարելու համար տրված կանխույժները:

Յուրաքանչյուր առհաշիվ անձ պարտավոր է սահմանված ժամկետին ներկայացնել հաշվետվություն ստացված գումարներին ծախսման մասին:

Կորականապես արգելվում է նոր կանխույժներ բաց թող-

նելը մինչև նախորդ ավանսի հաշվետվության ստացումը և հաստատումը:

Ճիշտ ժամկետին հաշվետվություն ներկայացնելու, ինչպես և ավանսի մնացորդը դրամարկղին հանձնելու դործի վրա հսկողությունը դրվում է գյուղկոտայի հաշվապահի վրա:

Գործուղումներին վերաբերվող ավանսային հաշվետվությունները ստուգելիս պետք է ղեկավարել ԽՍՀՄ-ի Կենտրոն-կոմի և Ժողկոմխորհի 17/VIII 1937 թ. վորոշմամբ հաստատված կանոններով գործուղման ծախսերի վճարման չափի վերաբերյալ: Առանց բացառության բոլոր ավանսային հաշվետվությունները պետք է հաստատված լինեն գյուղկոտայի վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից:

«Առհաշիվ անձեր» յենթահաշիվը պարտադրվում է, պահանջադրելով № 1 «Գրամարկղի» հաշիվը-տրված ավանսի գումարներով:

Այս յենթահաշիվը պահանջադրվում է՝

ա) № 9 կամ 10 հաշիվների պարտքին — գնորդի կողմից իր առհաշիվ գումարներից ապրանքների արժեքը վճարելու դեպքում:

բ) № 8 «Շրջանառության ծախսեր» հաշվի պարտքին — առհաշիվ ստացված գումարից կատարված տնտեսական ծախսերի գումարով:

գ) № 15 «Նյութեր» հաշվի պարտքին — առհաշիվ ստացված գումարներից արտադրական կամ տնտեսական նյութերի արժեքը վճարելու դեպքում:

դ) № 5 «Միջերման ապրանքներ» հաշվի պարտքին միջերման կողմից իր ավանսի գումարից միջերման ապրանքի արժեքը վճարելու դեպքում:

ե) № 1 «Գրամարկղ» հաշվի պարտքին — ավանսի մնացորդ գումարի վերադարձման դեպքում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ»

Այս յենթահաշվում հաշվառվում են գյուղկոտայների բանվոր-ծառայողների հետ յեղած հաշիվներն ըստ աշխատավարձի:

«Բանվորներ և ծառայողներ» յենթահաշիվը պահանջազեղք վում և բանվորներին և ծառայողներին հասանելիք աշխատավարձով, պարտադրելով № 8 «Շրջանառութեան ծախսեր» կամ № 16 «ձեռնարկութեանները չահագործում» հաշիվներն—ըստ պահանջելույն:

Այս յենթահաշիվը պարտադրվում և պահանջադրելով՝

ա) № 1 «Իրամարկդ» հաշիվը— բանվորներին և ծառայողներին վճարված աշխատավարձով:

բ) № 9 (Յենթահաշիվ «տնտեսական կազմակերպութեաններ, հիմնարկներ և անձեր ըստ այլ հաշիվներին») հաշիվը— բանվոր-ծառայողներից հասանելիք յեկամառհարկով, կուլտ-հարկով, փոխառութեանների բաժնեգրութեան հերթական մուծումներով, նաև անձերի ու կազմակերպութեանների ոգտին կատարողական թերթերով գանաղան պահումների դումարով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ ԸՍՏ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁԱԳԻՐԵՐԻ»

Այս յենթահաշիվը հատկացված և գյուղկոտայների բոլոր մատակարարների հետ հաշիվարկներն ըստ ապրանքային դործարքների հաշիվներու համար, բացառութեամբ այն Շրջմիութեան, վորի ցանցի մեջ և մտնում ավյալ գյուղկոտայը:

Այս յենթահաշիվը պարտադրվում և № 2 «հաշիվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշիվ պահանջադրելով— հաշիվ Փակատուրանների դումարի վճարումով կամ № 14 հաշիվ (յենթահաշիվ «փոխառութեաններ ըստ ապրանքաշրջանառութեան ընթացիկ վարկավորման») պահանջադրելով— յեթե հաշիվ-Փակատուրայի դումարի վճարումը Պետ-բանկի կողմից կատարված և վարկային հաշիվից:

«Մատակարարներ ըստ վճարման պահանջադրելով» յենթահաշիվը պահանջադրվում և № 3 «ապրանքների մուտքի և դնահատման» հաշիվ պարտքին—ակցեպոված հաշիվ-Փակատուրանների լրիվ արժեքով և № 8 հաշիվ պարտքին— մատակարարների կողմից գյուղկոտայի հաշիվին կատարված փոխադրված ծախսերի դումարով (յեթե ապրանքի մուտքը հաշիվառվում և անկախ «ապրանքների ճանապարհին» հաշիվից):

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐԲՆԵՐ ՅԵՎ ՀՈՒՄՈՒՅԹ ՀԱՆՁՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ»

Այս յենթահաշիվը հաշիվառվում են գյուղկոտայների հետևյալ հաշիվարկները՝

ա) Կոլխոզներին, կոլխոզնիկներին և մենատնտեսներին արված կանխավճարների դիմաց նրանց կողմից հանձնվելիք մթերման ապրանքների համաձայն կնքված պայմանագրերի:

բ) Կոլխոզնիկների հետ նրանցից ընդունված մթերման ապրանքների հաշիվարկը կատարելիս գյուղկոտային հանձնված մթերման ապրանքների չպահանջված դումարների (չվճարված անդորրադրերով): Մթերման ապրանքների դիմաց ավանսներ բաց թողնելիս անհրաժեշտ և խստորեն դեկավարելի շրջապատկոտայմիութեան հրահանգներով, վորանց մեջ պետք և հիշատակված լինի ո՞ւմ, ի՞նչ ապրանքների դիմաց, ի՞նչ ժամկետով և ի՞նչ դումարի սահմաններում տրվում են ավանսներ, ավանսի հանդեպման ժամկետները և այլն:

Վորպես կանոն, գյուղկոտայներում չպետք և լինեն հանձնված մթերման ապրանքների դիմաց չպահանջված դումարներ (չվճարված անդորրադրեր):

Այդպիսի պարտք կարող և առաջանալ միայն բացառիկ դեպքերում, յեթե վարչութեան դրամարկից մթերման անդորրադրերով գյուղկոտային հանձնված մթերումների արժեքը վճարելիս վորեւ պատճառով մթերքներ հանձնողը չներկայանա դրամը ստանալու: Այնուամենայնիվ, այդ դեպքում ևս գյուղկոտայը պետք և ձեռք առնի բոլոր միջոցներն իր պարտքը չվճարված անդորրադրերով հանդեցնելու համար:

«Հաշիվարկներ գյուղատնտեսական մթերքներ և հումուլթ հանձնողների հետ» յենթահաշիվը պարտադրվում և, պահանջադրելով № 1 «դրամարկդ», № 2 «հաշիվարկային հաշիվ Պետ-բանկում» կամ № 9 «դերիտորներ և կրեդիտորներ» (յենթահաշիվ «առհաշիվ անձեր») հաշիվները— մթերումների համար տրված ավանսի դումարներով, չվճարված անդորրադրերով հանդեցրված պարտքի դումարով և հանձնված մթերման ապրանքների դումարները հաշիվարկային հաշիվ միջոցով մարելու դեպքում:



Այս յենթահաշիվը պահանջադրվում է պարտադրելով № 5 «մթերման ապրանքներ» հաշիվը—ընդունված մթերման ապրանքների գնման արժեքով:

Մնալիտիկ հաշվառման մեջ յուրաքանչյուր անձի կամ կազմակերպության համար բաց է արվում առանձին անձնական հաշիվ, ըստ վորում չվճարված անդորրագրերով պարտքերի հաշվառումը տարվում է դժային ձևով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՅԵՎ ԱՆՁԵՐ ԸՍՏ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ»

Այս յենթահաշիվով հաշվարկվում են՝ հաշվարկներ կազմակերպությունների, հիմնարկների և անձերի հետ, բացառությամբ հետևյալ հաշվարկների՝ մատակարարների հետ ըստ վճարման պահանջադրերի, շրջապատկոտպմիության և նրա մըթերման դրասենյակի հետ, գյուղատնտեսական մթերքներ և հումուլթ հանձնողները հետ և գյուղկոտայների աշխատակիցները հետ:

Մասնավորապես այս հաշիվով հաշվառվում են հաշվարկները սոցապի մարմինների հետ, ֆին-մարմինների հետ (բացի բյուջեի կամ տասնհարկի ոգուտների հաշվարկներից), խնայողըամարկղի, տեղկոմի հետ, կազմակերպությունների և հիմնադրների հետ ըստ շենքերի և դուլքի կապալի, դերխոտրները հետ ըստ բլրեանյութանների, կազմակերպությունների, հիմնարկների և անձերի հետ, ըստ նրանց բաց թողնված ապրանքների և պատրաստի արտադրանքի, յեթե հաշվարկը կատարվում է գյուղկոտայի հաշվարկային հաշիվին փոխանցելու կարգով և այլն:

Այս յենթահաշիվը պահանջադրվում է կազմակերպություններից, հիմնարկներից և անձերից ոտացված կամ նրանց ոգալին հաշվված գումարներով, պարտադրելով ըստ գործարքի բնուլթին գանաղան հաշիվներ:

Այս յենթահաշիվը պարտադրվում է, պահանջադրելով գանաղան հաշիվները գործառնությունների բնուլթի համաձայն՝ գյուղկոտայի ոգալին հաշվված գումարներով:

Այս յենթահաշիվով հաշվառվում են գանաղան անձանց պարտքն ինվենտարիզացիայի ժամանակ նրանց մոտ հայտնաբերված արժեքների սահմանված բնական պակասորդի նորմաներից բարձր պակասումների համար:

«Անձեր ըստ պակասումների» յենթահաշիվում կարող են հաշվառվել միայն այնպիսի պարտքեր, վորոնց գործերը դեռ գատական և քննչական մարմիններին չեն հանձնված, վորովհետև գործերը գատաքննչական մարմիններին հանձնելու հետ միատեղ «անձեր ըստ պակասումների» յենթահաշիվից պարտքերի գումարը պետք է փոխանցվի «վիճելի ստանալիքներ ըստ պակասումների (բացի մանրերից)» յենթահաշիվին:

Մանր պակասումները, վորոնց պարտքը համաձայն ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի 9-հոկտեմբերի 1936 № 1825 վորոշման, պետք է գանձվի ընդհանուր քաղաքացիական կարգով, այս յենթահաշիվով չեն հաշվառվում:

Այլպիսի մանր պակասումները հաշվառվում են առանձին յենթահաշիվում (տես ներքև բերված «անձեր ըստ մանր պակասումների յենթակա գանձման ընդհանուր քաղաքացիական կարգով» յենթահաշիվին վերաբերվող պարզարանումը):

Այս յենթահաշիվում չի կարող հաշվարկվել նաև պարտքեր ըստ վրահաշվումների (տես «անձեր ըստ վրահաշվումների» յենթահաշիվին վերաբերվող պարզարանումը):

Յենթահաշիվ «անձեր ըստ պակասումների (բացի մանրերից)» պարտադրվում է հետևյալ հաշիվների պահանջադրումով՝

№ 1 «Դրամարկղ», № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում», № 5 «մթերման ապրանքներ», № 13 «պատրաստի արտադրանքներ արտադրական ձեռնարկություններում», № 15 «նյութեր», № 21 «հիմնական միջոցներ»—նյութական պատասխանատու անձանց հանձնված արժեքների հայտնաբերված բնական պակասորդի նորմայից վերաղանցող պակասորդի գումարով (յեթե տվյալ արժեքի համար կա բնական պակասորդի սահմանված նորմա):

«Անձեր ըստ պակասումների (բացի մանրերից)» յենթահաշիվը պահանջագրվում է՝

ա) № 1 «գրամարկը» հաշվի պարտքին— ստացված գումարների համար:

բ) Յենթահաշիվ «վիճելի ստանալիքներ ըստ պակասումների (բացի մանրերից)» պարտքին— այն պակասումների համար, վորոնց դործերը ուղարկված են դատաքննչական մարմիններին:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՆՁԻՆՔ ԸՍՏ ՄԱՆՐ ՊԱԿԱՍՈՒՄՆԵՐԻ, ՅԵՆԹԱԿԱ ԳԱՆՁՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ ԿԱՐԳՈՎ»:

Մանր պակասումների տակ հասկացվում են արժեքների պակասում (բնական պակասորդների համար սահմանված նորմայից քարձր պակասումները, բայց վոչ ավել նյութական պատասխանատու անձի մեկ ամսվա աշխատավարձի չափից), վորը առաջացել է տվյալ աշխատողի մոտ առաջին անգամ անհմտության, սխալ հաշվումների կամ այլ պատճառներով, վորոնց մեջ չի նրկատվում վորևե քրեական հանցանքի նշաններ:

Համաձայն ԽՍՀՄ-ի ԺԿԽ 9 հոկտեմբերի 1936 թ. վորոշման նման մանր պակասումները դանձվում են ընդհանուր քաղաքացիական կարգով, ըստ վորում մեղավորները յենթարկվում են դյուզլիտոսների վարչություններին կողմից կարգապահական սուլժի:

Այս յենթահաշիվով չի կարելի հաշվառել մանր պակասումները, վորոնք տվյալ աշխատավորի մոտ առաջին անգամը չեն վոր հայտնաբերված են կամ յեթե հայտնաբերված են նույնիսկ առաջին անգամ, բայց նկատվում է վոր դա քրեական հանցանքի արդյունք է: Այդպիսի մանր պակասումներն անհրաժեշտ է հաշվառել «անձեր ըստ պակասումների» (բացի մանրերից) յենթահաշիվով, հանձնելով դործերը դատաքննչական մարմիններին ընդհանուր հիմունքներով, վորոնք վործադրվում են մնացած խոշոր պակասումների նկատմամբ:

Յենթահաշիվ «անձեր ըստ մանր պակասումների, յենթակա դանձման ընդհանուր քաղաքացիական կարգով» պարտադրվում է № 1 «գրամարկը», № 4 «ապրանքներ մանրավաճառ ձեռնարկություններում», № 5 «մթերման ապրանքներ», № 13 «պատ-

րաստի արտադրանքներ», № 15 «նյութեր» և այլ հաշիվների պահանջին— աշխատողի մոտ հայտնաբերված մանր պակասումների դումարով:

Յենթահաշիվը պահանջագրվում է՝

ա) № 1 «գրամարկը» հաշվի պարտքին— պակասումների պարտքերը հանգեցնելու համար մուծված դումարներով:

բ) «բանվորներ և ծառայողներ» յենթահաշիվի պարտքին— մանր պակասումների դիմաց աշխատողների աշխատավարձից բացված դումարներով (աշխատողի համաձայնությամբ):

գ) «վիճելի ստանալիքներ ըստ այլ հաշվարկների» յենթահաշիվի պարտքին— դանազան մարմիններին ներկայացված (քահաքացիական կարգով) հայցի դումարով, ընդդեմ նյութական պատասխանատու անձերի, յեթե վերջինները հրաժարվում են իրենց պարտքն ըստ մանր պակասումների կանխիկ վճարով կամ աշխատավարձից պահելու միջոցով մարելուց:

դ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պարտքին— վերադաս մարմինների թուլյալությամբ անհուսալի մանր պակասումների դուրս գրման համար, յեթե այդ պարտքերի դանձումը բոլորովին անհնարին է (պարտասպանի մահվան պատճառով և այլն):

Անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ առանձին անձերի:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՆՁԵՐ ԸՍՏ ՎՐԱՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են այն վրահաշիվումները, վորոնք դյուզլիտոսի վարչության վորոշմամբ դրանցվում են նյութական պատասխանատվություն կրող անձի հաշվին նրա մեղքով առաջացած ապրանքների, նյութերի, արտահանողուստի, դուրքի և այլ արժեքների վրացման, կորսվածքների և խտտանի համար:

Այս յենթահաշիվով հաշվառվում են նաև առհաշիվ անձանց կողմից փաստաթղթերի դնահատման (տակսիրովկայի) ժամանակ թուլյատրված դերավճարումները և ավանտային հաշիվում վությունը ներկայացնելիս հաշվապահության կողմից չընդունված ծախսերը, վորպիսիք չեն հանդիսանում նյութական պատասխանատվություն կրող անձին հանձնված արժեքների պակասորդ (որինակ, փաստաթղթերի վոչ ճիշտ ձեւակերպում,

բահմանված նորմաներից բարձր ծախսեր, թեկուզ արդարա-
ցուցիչ փաստաթղթերով հաստատված և այլն) :

Յենթահաշիվ «անձեր ըստ վրահաշվումների» պարտազրկում
է, պահանջադրելով հետևյալ հաշիվները ըստ պատկանելույն՝
յենթահաշիվ «առհաշիվ անձեր», հաշիվ № 4 «սպրանքներ ման-
րավաճառ ձեռնարկություններում», հաշիվ № 5 «մթերման
սպրանքներ», հաշիվ № 15 «նյութեր» և այլ հաշիվներ :

Յենթահաշիվ «անձեր ըստ վրահաշվումների» պահանջա-
զրկում է, պարտազրկելով՝

ա) հաշիվ № 1 «զբամարկդ» — վրահաշվումների դիմաց ըս-
տացված դումարներով :

բ) «Վիճելի ստանալիքները» յենթահաշիվը — վրահաշվում-
ներին վերաբերելու դործերը դատական մարմիններին հանձնե-
լիս :

գ) № 8 «Շրջանառության ծախսեր» հաշիվը — յեթե նախ-
կինում նյութական պատասխանատվություն կրող անձի հաշիվին
զբանցված դումարը հետագայում ընդունվում է վարչության
հաշիվին վորպես դանազան արժեքների փչացում, առաջացած
վոչ պատասխանատու անձի մեղքով (յեթե այդ հանդամանքը
կհաստատվի լրացուցիչ նյութերով) :

դ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը — վերու-
դաս կազմակերպության թույլտվությամբ՝ պարտքի լրիվ ան-
հուսալիությունը հաստատվելու դեպքում :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՎԻՃԵԼԻ ՍՏԱՆԱԼԻՔՆԵՐ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են առանց բացառության
բոլոր կազմակերպությունների, հիմնարկների և անձերի պարտ-
քերը, վորոնց դործերը հանձնված են դատաքննչական մարմին-
ներին կամ արբիտրաժին : Յեղբավակման հաշվեկշիռ կազմելիս
թույլատրվում է վիճելի ստանալիքներից ռեզերվացնել յուրա-
քանչյուր պարտքից վոչ ավել 25% — ի չափով :

Ամսական հաշվեկշիռներ կազմելիս վիճելի ստանալիքներից
ռեզերվացում կատարելը չի թույլատրվում (մանրամասնու-
թյունները վիճելի ստանալիքների ռեզերվացման կարգի մասին

տես № 19 «ռեզերվ» ըստ վիճելի ստանալիքների» հաշվի պար-
զարանումը) :

Դատարանի կամ արբիտրաժի վորոշումը ստանալու հետ
միաժամանակ վիճելի ստանալիքը լրիվ դումարով դուրս է դըր-
վում «վիճելի ստանալիքներ» յենթահաշիվից և փոխանցվում է
այլ հաշիվներին՝ նայած ում ոգտին և դործը վորոշվում :

Յեթե դյուղկոտպի հայցը լրիվ բավարարվում է, ապա վի-
ճելի ստանալիքի դումարը փոխանցվում է «դեբիտորներ ըստ
դատարանի կամ արբիտրաժի վորոշման» յենթահաշիվին, ընդ վո-
րում յեթե այդ վիճելի ստանալիքն անցել է անցյալ տարվանից
և հետևաբար, յեղբավակման հաշվեկշիռը կազմելուց ռեզեր-
վացված էր, ապա այդ ստանալիքի դեմ կազմված ռեզերվը
փոխանցվում է № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվին
(հոդված «յեկամուսներ չողտադործված ռեզերվները» հոդ-
վածին) :

Յեթե դատարանի կամ արբիտրաժի կողմից հայցը մեր-
ժված է, ապա վիճելի ստանալիքի դումարը, ստանալով չբժի-
ության վարչության թույլտվությունը, դուրս է դըրվում :

ա) Տվյալ ստանալիքի դիմաց կազմված ռեզերվի սահման-
ներում № 19 «ռեզերվ ըստ վիճելի ստանալիքների» հաշվի
պարտքին :

բ) Չռեզերվածված մասով — № 23 «կորուստներ և կուտա-
կումներ» հաշվի պարտքին :

Վիճելի ստանալիքների անալիտիկ հաշվառումը ստորաբա-
ժանվում է՝

ա) Վիճելի ստանալիքներ ըստ պակասումների (բացի մա-
նրերից) :

բ) վիճելի ստանալիքներ ըստ այլ հաշվարկների :

«Վիճելի ստանալիքներ» յենթահաշիվի սաղոն ցույց է տա-
լիս կազմակերպությունների, հիմնարկների և անձերի պարտքե-
րի մնացորդը, վորոնց դործերը հաշվեկշիռ կազմելու ժամանակ
դանվում են դատաքննչական մարմիններում կամ արբիտրաժում :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԴԵԲԻՏՈՐՆԵՐ ԸՍՏ ԴՍԱՐԱՆԻ ԿԱՄ ԱՐԻԻ-ՏՐԱԺԻ ՎՈՐՈՇՄԱՆ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են կադմակերպութիւններին, հիմնարկներին և անձերին այն պարտքերը, վորոնց նկատմամբ կան սպառողական ընկերութիւնների ոգտին դատարանի կամ արբիտրաժի վորոշումներ:

Ոժանդակ մատրաններում տարվում և առանձին հաշվառում ա) դերիտորներ ըստ դատարանի վորոշման ըստ պակասումների (բացի մանրներից):

բ) Դերիտորներ ըստ դատարանի վորոշման ըստ վատնումներին:

գ) Այլ դերիտորներ ըստ դատարանի կամ արբիտրաժի վորոշման:

Պակասումներից առաջացած պարտքերն ըստ պակասումների կամ ըստ վատնումների դերիտորներին դասելը կախված և դատարանի վորոշումից՝ յենթե դատարանը դործն ըստ պակասումների քննութիւն և առնում գյուղկոտայի քաղաքացիական հայցը բավարարելու կարգով, դրա հետ միասին վորոշում չկայացնելով վատնումների համար նյութապես պատասխանատու անձին շրեական սրատասխանատիւթիւն յենթարկելու, ապա այդպիսի պարտքը պետք և արտացոլված լինի «դերիտորներ ըստ դատարանի վորոշման ըստ պակասումների» հոդվածով:

ՅԵԹԵ քաղաքացիական հայցը բավարարելու հետ միաժամանակ նյութական պատասխանատու անձը կդատարարովի նաև քրեական կարգով վատնումների համար (այսինքն պակասած ապրանքների յուրացման համար), ապա այդպիսի պարտքը անհրաժեշտ և արտացոլել «դերիտորներ դատարանի վորոշման ըստ վատնումների» հոդվածով:

Այսպիսով պակասումների այս կամ այն կատեգորիայի ստանալիքին դասելու հարցի վերջնական լուծումը կախված և դատարանի վորոշումից. մինչև դատարանի վորոշումը գյուղկոտայը նյութական սրատասխանատիւթիւն կրող անձի պարտքը ըստ պակասումների հաշվառում և կամ «անձեր ըստ պակասումների (բացի մանրներից)» յենթահաշիվով, յենթե դործը դասաքննչական մարմիններին դեռ չի հանձնված, կամ «վիճելի

պատանլիքներ ըստ պակասումների» յենթահաշիվով, յենթե դործը ըստ պակասումների դոնվում և դատաքննչական մարմիններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վերև նշվածը չի վերաբերվում մանր պակասումներին, վորոնք յենթակա յեն դանձման ընդհանուր քաղաքացիական կարգով:

Այդպիսինների հաշվառման կարգը ցույց և արված «անձեր ըստ մանր պակասումների, յենթակա դանձման ընդհանուր քաղաքացիական կարգով» յենթահաշիվի պարզարանման մեջ:

ՅԵՆԹահաշիվ «դերիտորներ ըստ դատարանի կամ արբիտրաժի վորոշման» պարտադրվում և, պահանջադրելով «վիճելի ստանալիքներ» յենթահաշիվը, յենթե դատարանը կամ արբիտրաժը գյուղկոտայի հայցը բավարարել և:

ՅԵՆԹահաշիվ «դերիտորներ ըստ դատարանի կամ արբիտրաժի վորոշման» պահանջադրվում և, պարտադրելով՝

ա) № 1 կամ № 2 հաշիվները— պարտքի դիմաց ստացված շրամական գումարներով:

բ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը— վերադաս կադմակերպութիւն թույլատիւթիւնը յենթե դատարանի կամ արբիտրաժի կողմից վճուված գումարը կհամարվի անհուսալի դանձելու տեսակետից:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՎԱՆԴՆԵՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՅԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՍՏԱՅՎԱԾ ՄԻՆՁԵՎ 1-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 1938 Թ.»

Այս յենթահաշիվով հաշվառվում են գյուղկոտայում ալանդատուների կողմից չպահանջված ժամկետային և անժամկետ ալանդները:

Համաձայն ԽՍՀՄ ԺԿԽ-ի 27 սեպտեմբերի 1937 թ. № 109 1686 վորոշման նոր ալանդների ընդունումը սպառողական ընկերութիւններում դադարեցված և, նախկինում ստացված ալանդները պետք և վերադարձված լինեն ալանդատուներին:

Հետևաբար, ներկայումս այս յենթահաշիվը վորպես կանոն կարող և միայն պարտադրվել (ալանդը վերադարձնելիս) պահանջադրելով № 1 «դրամարկը» հաշիվը:

Կրեդիտային գրանցումներն այդ յենթահաշիվով կարող են տեղի ունենալ միայն ալանդներով հասանելիք տոկոսներ հաշվառելու ժամանակ:

Տոկոսները հաշվառումը կատարվում է № 8 «չըջանառու-
թյան ծախսեր» հաշվով (յենթահաշիվ «չըջանառության ծախ-
սեր ըստ առևտրի») տարվա վերջին և ավանդների լիկվիդա-
ցիայի դեպքում:

Չպահանջված ավանդների անալիտիկ հաշվառումը ներկա-
յումս կարելի չէ տանել դժային ձևով:

Այս յենթահաշվի սարգոն կարող է միայն կրեդիտային լի-
նել:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՏՈՒԿ ԱՎԱՆԴՆԵՐ ՓԱՅԱՏԵՐԵՐԻՑ ՇԻՆԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԱՅՎԱԾ ՄԻՆՁԵՎ 1-Ը ՀՈՒՆՎԱՐԻ
1937 Թ.»**

Այս յենթահաշվով հաշվառվում են դյուրկոտայների փայտ-
տերերի կողմից մուծված կապիտալ շինարարությանը Ֆինանսա-
վորելու համար հատուկ յերկարատև ավանդները, վորը փայտ-
տերերի ընդհանուր ժողովի վարչամար հավաքվում էր մինչև
1936 Թ.:

1936 Թ. փայտտերերի նոր ավանդները ընդունումը արգել-
ված է: Ուստի նոր դրանցումներ այս յենթահաշվի կրեդիտով
լինել չի կարող:

Այս յենթահաշվի սարգոն կարող է լինել միայն կրեդիտա-
յին:

Այս յենթահաշվի պարտադրվում է ավանդի վերադարձնե-
լու դեպքում, պահանջադրելով հաշիվ № 1 «դրամարկդ»:
Հատուկ ավանդների անալիտիկ հաշվառումը տարվում է
դժային ձևով:

Փայտտերերի շինարարության համար հատուկ ավանդների
լիկվիդացիայի կարգը սահմանվում է Յենտրոսոյուպի նախա-
դահության կողմից:

ՀԱՇԻՎ № 10 «ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՇՐՋՍՊԱՌԿՈՊՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ»

№ 10 հաշվով հաշվարկվում են հաշվարկներն այն շրջապա-
կոտումիության հետ, վորի ցանցի մեջ մտնում է համապատաս-
խան սպառողական ընկերությունը:

Այս հաշվով սպառողական ընկերությունն արտացոլում է

բոլոր հաշվարկներն իր շրջապակոտումիության հետ. անկախ
հաշվարկի ձևերից և դործառնությունների բնույթից:

Այն հանրապետություններում և մարզերում, վորտեղ չկա
միջին ոչակ (չըջապակոտումիություններ), այս հաշվով սպա-
ռողական ընկերությունները հաշվարկում են բոլոր իրենց հաշ-
վարկները այն հանրապետական (մարզային) միությունների
հետ, վորի սխառեմի մեջ սպառողական ընկերություններն ան-
միջականորեն մտնում են:

№ 10 հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է հետևյալ
3 յենթահաշիվներով՝

1. հաշվարկներ շրջապակոտումիության վարչության հետ
2. հաշվարկներ շրջապակոտումիության մթերման դրամնե-
նրակի հետ:

3. Հաշվարկներ շրջապակոտումիության այլ տնտեսաշար-
կային ձեռնարկությունների հետ:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՇՐՋՍՊԱՌԿՈՊՄԻՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ»**

Այս յենթահաշվով հաշվառվում են դյուրկոտայի հաշվարկնե-
րն իր շրջիության հետ ըստ հատկացումների, առևտրական և
այլ պատահական բնույթ ունեցող դործառնությունների, բացի
մթերման դրամենյակի և շրջիության այլ ինքնուրույն հաշ-
վեկզնի անցած տնտեսաշարկային ձեռնարկությունների հետ
ունեցած հաշվարկներից:

Յենթահաշիվ «հաշվարկներ շրջապակոտումիության հետ»
պարտադրվում է վճարված դրամական դումարների համար,
պահանջադրելով հաշիվ № 1 «դրամարկդ» կամ հաշիվ № 2
«հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» և պահանջադրվում է,
պարտադրելով № 3 «պարանքների մուտք և դնահատում» հա-
շիվը— շրջիությունից ստացված պարանքների դնման արժե-
քով, № 15 «նյութեր» հաշիվը— դնված նյութերի համար, № 2
«հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշիվը— ստացված դրա-
մական փոխհատուցումներով և այլն նայած դործառնություն
բնույթին:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՇՐՋՍՊԱՌԿՈՈՊՄԻՈՒԹՅԱՆ ՄԸ-
ԹԵՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԵՏ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են սպառողական ընկերու-
թյունների հաշվարկները շրջապառուկոսպիւթյան միջերման
դրասենյակի հետ:

Յենթահաշիվ «հաշվարկներ շրջապառուկոսպիւթյան միջեր-
ման դրասենյակի հետ» պարտադրվում է՝

ա) № 7 հաշվի «միջերման ապրանքների իրացում» յենթա-
հաշվի պահանջին—հանձնված հումուլթի և դյուղատնտեսական
միջերգների արժեքով:

բ) № 1 կամ № 2 հաշիվները պահանջով— միջերման դրա-
սենյակի հասցեյով փոխադրված դրամական դումարներով:

Այս յենթահաշիվը պահանջադրվում է № 1 կամ № 2 հա-
շիվների պարտքին— միջերման դործառնությունները կատարե-
լու համար ստացված վարկերով կամ հանձնված միջերման ապ-
րանքների դիմաց ստացված դրամական դումարներով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՇՐՋՍՊԱՌԿՈՈՊՄԻՈՒԹՅԱՆ
ԱՅԼ ՏՆՏՀԱՇՎԱՐԿՍՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են հաշվարկները շրջապառ-
կոսպիւթյան ինքնուրույն հաշվեկշռի անցած այլ տնտհաշվար-
կային ձեռնարկությունների հետ (բացի միջերման դրասենյա-
կից):

Անալիտիկ հաշվառման մեջ յուրաքանչյուր տնտհաշվարկա-
յին ձեռնարկության համար բացվում է առանձին հաշիվ:

Այս յենթահաշիվը սպարտադրվում է № 1 կամ № 2 հաշիվ-
ների պահանջին— վճարված դրամական դումարներով, պահան-
ջադրվում է № 3 «ապրանքների մուտք և դնահատում» հաշվի
պարտքին— ստացված ապրանքների համար, № 1 կամ № 2
հաշիվների պարտքին— ստացված դրամների համար և այլն ըստ
պատկանելույն:

Պարբերաբար (վոչ պահաս յեռամսյակը մեկ անգամից) ան-
հրաժեշտ է կատարել հաշվարկների լրիվ ստուգում շրջապառ-
կոսպիւթյան վարչության, նրա միջերման դրասենյակի և այլ
տնտհաշվարկային ձեռնարկությունների հետ:

Այն դեպքերում յերբ դյուղկոսպն իր հաշվարկները շրջմի-
ուլթյան և նրա տնտհաշվարկային ձեռնարկությունների հետ
ստուգելուց հետո կարողի վոր ձեռնարկությունների մի մասին
ինքն է մնում պարտք, իսկ մյուսներից ունի ստանալիք, ապա
շրջմիության հետ ունեցած համաձայնությամբ (վոչ պահաս
յեռամսյակը մեկ անգամ) և նախադահի թույլությամբ կարե-
լի յե փոխադարձ հաշվարկների հաշվարկում կատարել հիմք ու-
նենալով յուրաքանչյուր ձեռնարկության հետ կատարված ըս-
տուգման ակտերը:

Սպառողական ընկերությունները կարող են այդպիսի հաշ-
վարկումներ կատարել միայն այդ մասին ունենալով շրջմիութ-
յան ավիդոները (Շրջմիության կողմից կատարված հաշվար-
կումների մասին տեղեկանքները):

Գյուղկոսպը չի կարող ինքնակամ կերպով շրջմիության ա-
ռանձին ձեռնարկների դերիտորական և կրեդիտորական պարտ-
քերի հաշվարկում կատարել, վորովհետև այդ դեպքում դյուղ-
կոսպի և շրջմիության դրանցումների միջև կատաճանան ձեղք-
վածքներ:

ՀԱՇԻՎ № 11 «ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ»

Այս հաշիվով հաշվարկվում են սպառողական ընկերության
փոխադարձ հաշվարկներն իր ինքնուրույն հաշվեկշռի անցած
տնտհաշվարկային ձեռնարկությունների հետ:

Այս հաշիվի համար անալիտիկ հաշվառման մեջ տարվում են
յերկու յենթահաշիվներ՝

1. ներքին հաշվարկներ ըստ տրված միջոցների (հիմնական
և շրջանառու)

2. ներքին հաշվարկներ յենթակա փոխհատուցման

Այս յենթահաշիվների ներսում յուրաքանչյուր տնտհաշվար-
կային ձեռնարկության համար բացվում են առանձին անձնական
հաշիվներ:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ԲՍՑ ՏՐՎԱԾ ՄԻ-
ՋՈՅՆԵՐԻ»**

Այս յենթահաշիվով հաշվառվում են վարչության կողմից համապատասխան տնտեսաշարժային ձեռնարկութեանը հատկացված միջոցները: Սպառողական ընկերութեան վարչության մոտ այս հաշվի սարժոն պետք է լինի դերեատային, իսկ ձեռնարկութեաննների մոտ — կրեդիտային:

Սպառողական ընկերութեաննների վարչութեանններում այս յենթահաշիվը պարտադրվում է տնտեսաշարժային ձեռնարկութեանններին տրված միջոցները լրիվ արժեքով, այդ արժեքները հաշվառող հաշիվները պահանջադրումով («գրամարկը», «հաշվարկային հաշիվ», «սպրանքներ», «նյութեր», «հիմնական միջոցներ» և այլն):

Յեթև ձեռնարկութեանններին միջոցներ հատկացնելիս, հանձնվում են նրանց կարգավորող հոդվածներ (հիմնական միջոցների մաշում, հավելումներ սպրանքների վրա, սեզերվ վրձելի ստանալիքների), կամ կրեդիտորական պարտքեր, սպառողական ընկերութեան վարչութեան հաշվառահաշիվները հանձնված պասսիվների դումարով պահանջադրում է «ներքին հատկացումներ ըստ տրված միջոցների» յենթահաշիվը պարտադրելով հանձնված պասսիվները հաշվարկող հաշիվները:

«Ներքին հաշվարկներ ըստ տրված միջոցների» յենթահաշիվը սպառողական ընկերութեաննների վարչութեանում պահանջադրվում է նաև հետևյալ դործառնութեանններով՝

ա) «Ներքին հաշվարկներ յենթակա փոխառուցման» յենթահաշիվի պարտադրումով — տնտեսաշարժային ձեռնարկութեաննների հաշիվին, վարչութեան կողմից կենտրոնացված կարգով վճարված յեկամտահարկի դումարով:

բ) «Հիմնական ֆոնդի» հաշիվի պարտադրումով — տնտեսաշարժային ձեռնարկութեանններում դանդից հիմնական միջոցները մաշման դումարով:

Սպառողական ընկերութեաննների տնտեսաշարժային ձեռնարկութեաննները կազմակերպութեան վարչութեան ավիդոները հիման վրա տալիս են զբանցումներ հակառակ թղթակցութեամբ վերև նշված դրանցումների, այսինքն պահանջադրում են «ներ-

քին հատկացումներ ըստ տրված միջոցների» յենթահաշիվը, այն դեպքում յերբ սպառողական ընկերութեաննների վարչութեանններն այս յենթահաշիվը պարտադրում են և ընդհակառակը:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՅԵՆԹԱԿՍ ՓՈՒ-
ՀԱՏՈՒՑՄԱՆ»**

Այս յենթահաշիվով հաշվառվում են սպառողական ընկերութեան վարչութեան ընթացիկ հաշվարկներն իր տնտեսաշարժային ձեռնարկութեաննների հետ: Վարչութեանններում «ներքին հաշվարկներ յենթակա փոխառուցման» յենթահաշիվը պարտադրվում է տնտեսաշարժային ձեռնարկութեան հաշիվին կատարված վճարումներով, իսկ պահանջադրվում է տնտեսաշարժային ձեռնարկութեաննների կողմից ի հաշիվ վարչութեան կատարված հաշվարկներով:

Վարչութեան և տնտեսաշարժային ձեռնարկութեան մեջ յեղած բոլոր ներքին հաշվարկները պետք է ճիշտ ստուգված լինեն, տնտեսաշարժային ձեռնարկութեան և վարչութեան բալանային սպրանքները պետք է նույնանման լինեն: (ТОЖДЕСТВЕННЫЙ

Բալանում չստուգված հաշվարկներ թողնել կորակնապետ արգելվում է, և այդպիսի բալանները վորոնց մեջ կհայտնաբերվեն տարբերութեաններ ներքին հաշվարկներով, դիտվում են վորպես սխալ կազմված և վերադաս կազմակերպութեաննների կողմից չպետք է ընդունվեն:

**ԿԱՇԻՎ № 12 «ՓԱՅԱՍՈՒԾՈՒՄՆԵՐ
ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ»**

№ 12 հաշիվով հաշվառվում են փայտերերից ստացված փայտածուծումները: Փայտածուծումների դանձման, վերադարձման և փոխադրման դործառնութեաննների ձևակերպումը շարադրված է Յենտրոսոյուզի այդ հարցի վերաբերյալ հրահանգի մեջ:

Փայտածուծումների անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ փայտերերի անձնական հաշիվների հատուկ ձևի մատյանով:

Գյուղկրոպներում, վորտեղ փայտերերի հաշվառումը կատարվում է, վերահաշվառում անցած բոլոր փայտերերի փայտածուծումներն առանձնացվում են հատուկ յենթահաշիվում:

Այդ յենթահաշվում հաշվառվում են նաև վերացուցակա-
դրումից հետո նոր ընդունված փայտերերի փայտածուծումները:

Փայտածուծումներ ազդարենակուլթյունից» հաշվիլը պահան-
ջադրվում է ստացված փայտածուծումների դումարով, պարտա-
դրելով № 1 «դրամարկը» հաշվիլը, պարտադրվում է— փայ-
տերերին փայտածուծուժը վերադարձնելիս կամ փոխադրելիս,
պահանջադրելով № 1 «դրամարկը» կամ № 2 «հաշվարկային
հաշիվ Պետ-բանկում» հաշիվները:

Յեթե փայտերերի վերահաշվառումից հետո պարզվի, վոր
փայտածուծման դումարն ըստ փայտերերի անձնական հաշիվ-
ների ալել է հիմնական (բալանսային) № 12 հաշվի դումարից—
սպա տարբերությունը դրանցվում է № 12 «փայտածուծումներ»
հաշվի կրեդիտին, պարտադրելով № 18 «հիմնական ֆոնդ» հաշի-
վը, իսկ յեթե պարզվի, վոր փայտածուծումների դումարը ըստ
փայտերերի անձնական հաշիվների պակաս է № 12 հաշվի մնա-
ցորդից— տարբերությունը դուրս է դրվում № 12 հաշվից, պա-
հանջադրելով № 18 «հիմնական ֆոնդ» հաշիվին:

ՀԱՇԻՎ № 13 «ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱՂՐԱՆՔ ԱՐՏԱՂՐԱԿԱՆ ձԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Այս հաշիվով հաշվառվում է արտադրական ձեռնարկություն-
ներում յեղած այն պատրաստի արտադրանքը, վորը յենթակա
յե իրացման կամ դյուղիտույի սեփական առևտրական ցանցի մի-
ջոցով կաթ թե անմիջականորեն ձեռնարկությունից— կողմնա-
կի կազմակերպություններին:

Գյուղկոտայներում պատրաստի արտադրանքները հատուկ
հաշիվով հաշվառվում են այն դեպքում, յերբ արտադրական
ձեռնարկություններն ունեն հատուկ պահեստապես, վորը պա-
տասխանատու յե պատրաստի արտադրանքների պահպանման
համար:

Յեթե պատրաստի արտադրանքի նյութավես պատասխանա-
տությունը կրում է արտադրական ձեռնարկության վարպետը,
սպա ամսվա ընթացքում պատրաստի արտադրանքի փոխանցու-
մը № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվից № 13
հաշիվին չի կատարվում, վորովհետև պատրաստի արտադրանքն
առևտրական ձեռնարկություններին բաց թողնելիս այդ դուրս

դրումն ուղղակի ձեռնարկություն է № 3 «մուքի և դնահատման»
հաշիլը պարտքով և № 16 հաշիլի պահանջով: Ամսվա վեր-
ջին ինվենտարիզացիայի ժամանակ պատրաստի արտա-
դրանքի մնացորդներն արտադրական ձեռնարկություններում
ցուցակադրվում են և անկախ նրանից թե ում նյութական պա-
տասխանատության տակ են դտնվում այդ արտադրանքները
կազմվում է դրանցում՝ № 13 «պատրաստի արտադրանքներ
արտադրական ձեռնարկություններում» հաշիլի պարտքին, № 6
«արտադրական ձեռնարկությունների շահագործում» հաշիլի
պահանջին:

«Պատրաստի արտադրանքներ արտադրական ձեռնարկու-
թյուններում» հաշիլի անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ
նյութավես պատասխանատու անձերի, արտադրանքի տեսակ-
ների քանակով և դումարով:

ՀԱՇԻՎ № 14 «ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍԱՅՎԱՄ»

№ 14 հաշիվով հաշվառվում են վերադաս կոտպերատիվ
կազմակերպություններից, Առևտրական բանկից, Պետրանկից և
այլ կազմակերպություններից ստացված բոլոր յերկարատև և
կարճատև վարկերը:

Այս հաշիվն ունի հետևյալ յենթահաշիվները՝

1. փոխառվություններ ստացված չըջանառու միջոցների
համար:
2. փոխառվություններ ստացված շահագործման չհանձ-
նված կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար:
3. փոխառվություններ ստացված շահագործման հանձնված
կապիտալ ներդրումների որյեկտների ֆինանսավորման համար:
4. փոխառվություններ ապրանքաշրջանառության ընթացիկ
վարկավորման:
5. փոխառվություններ սեփնային կուտակման, նախա-
ժամկետ ներմուծման և յրախուսման ապրանքների դիմաց:
6. փոխառվություններ միջերման ապրանքների դիմաց:
7. փոխառվություններ բլանկային:
8. փոխառվություններ այլ:
9. փոխառվություններ ժամկետին չվճարված:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՍՍՅՎԱԾ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են սպառողական ընկերությունների շրջանառու միջոցներն ուժեղացնելու համար պետբյուջեից, սպառողական կոոպերացիայից և այլ կազմակերպություններից ստացված յերկարատև փոխառվությունները: Յուրաքանչյուր փոխառվության հաշվառումը և ժամկետին վճարման հսկողությունը անալիտիկ հաշվառման մեջ տարվում են առանձին:

Յենթահաշիվը պահանջադրվում է, պարտադրելով՝ № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշիվը—փոխառվությունն ստանալիս № 8 շրջանառուլթյան ծախսեր հաշիվը—փոխառվության համար հասանելիք տուկոսներով: Յենթահաշիվը պարտադրվում է, պահանջադրելով № 2 հաշիվը—փոխառվությունը հանդեցնելիս:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՍՍՅՎԱԾ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՀԱՆՁՆՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՅԵԿՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են շրջկոոպների և գյուղկոոպների կողմից կապիտալ ներդրումները չափարտված և շահագործմանը չհանձնված որչեկտների ֆինանսավորման համար ստացված փոխառվությունները:

Յուրաքանչյուր փոխառվության համար տարվում է առանձին անալիտիկ հաշիվ, ընդ վորում ոժանդակ մատյանում այդ փոխառվությունները խմբավորվում են ըստ վերադարձվելիք և անվերադարձ փոխառվությունների:

Վերադարձվելիք փոխառվությունները սպառողական ընկերությունները վորպես կանոն ստանում են Առ-բանկից (գլխավորապես Առբանկի հանձնարարությունքամբ Պետ-բանկից) կապիտալ ներդրումների պլանային որչեկտների ֆինանսավորման համար:

Վերադարձվելիք փոխառվությունը ստանալիս շրջկոոպը կամ գյուղկոոպը պահանջադրում է այս յենթահաշիվը, պարտադրելով № 2, № 15, № 20 և այլ հաշիվներն ըստ պատկանելույն:

Շինարարությունը վերջանալուց և ավարտված որչեկտը շահագործման հանձնելուց հետո, այս յենթահաշիվը պարտադրվում է վերադարձվելիք փոխառվության լրիվ դումարով և պահանջադրվում է յենթահաշիվ «փոխառվություններ ստացված շահագործման հանձնված կապիտալ ներդրումների որչեկտների ֆինանսավորման համար»:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՍՍՍՅՎԱԾ ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

Այս յենթահաշիվում հաշվառվում են Առևտրական բանկից կամ այլ վերադաս կոոպերատիվ կազմակերպություններից ավարտված և շահագործման հանձնված կապիտալ ներդրումների որչեկտների ֆինանսավորման համար ստացված վերադարձվելիք փոխառվությունները:

«Ստացված փոխառվություններ շահագործման հանձնված կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար» յենթահաշիվը պահանջադրվում է կապիտալ ներդրումների ավարտված որչեկտների շահագործման մեջ դործարկման դնելու ակտի հիման վրա պարտադրելով «Ստացված փոխառվություններ շահագործման չհանձնված ներդրումների համար» յենթահաշիվը:

Պարտադրվում է վերադարձվելիք փոխառվությունները մարման դեպքում № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշիվ պահանջին:

Միաժամանակ փոխառվության վճարված դումարի չափով արվում է յերկրորդ դրանցում «ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշիվ պարտքին և «հիմնական ֆոնդ» յենթահաշիվ պահանջին:

Յեթե «ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշիվ սալդոն մարվող փոխառվության դումարից պակաս է, ադա այդ դրանցումը կատարվում է «ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշիվ առկա սալդոյի սահմաններում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՇՐՁԱ-
ՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ»

Այս յենթահաշիվում հաշվառվում են սպառողական ընկերու-
թյունների սպրանքաշրջանառութային վարկավորման համար
ստացած բոլոր կարճատև փոխառվությունները, բացառութեամբ
այն փոխառվությունները, վերոնք ստացվում են սեզոնային
կուտակման, նախաժամկետ ներմուծման (դավոյ) և խրախուս-
ման սպրանքների համար: Սպառողական ընկերությունների
Պետրանկի կողմից վարկավորման կարգը սահմանված է ԽՍՀՄ
Ժողկոմխորհի 1937 թ. հունիսի 11-ի վերջումով:

Այս նույն յենթահաշիվին են հաշվառվում գյուղատնտես-
վարչության կողմից Պետրանկից ստացվող կարճատև վարկերը
Պետրանկին փոխադրված, սակայն հաշվարկային հաշվին չը-
փոխանցված գյուղատնտեսի առևտրից ստացված գումարները (վի-
րուչկան) (փոխառվություններ ճանապարհին գտնվող գումար-
ների) դիմաց, ինչպես և ակիրեդիտիվների դիմաց ստացվող
փոխառվությունները:

«Փոխառվություններ ըստ սպրանքաշրջանառութային ընթա-
ցիկ վարկավորման» յենթահաշիվը պահանջադրվում է Պետրան-
կից ստացված փոխառվութային գումարով պարտադրելով № 2
«հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշիվը, յեթե Պետրանկի
բաժանմունքը տրված փոխառվությունը փոխանցում է դժուր-
կոտայի հաշվարկային հաշվին կամ № 9 «դեբիտորների և կրե-
դիտորների» հաշվի և № 10 «հաշվարկներ շրջմության հետ»
հաշվի պարտքին (ըստ պատկանելույն) յեթե Պետական բանկի
կողմից փոխառվությունը կատարվում է գյուղատնտեսի հաշվար-
կային հաշվից անկախ:

«Փոխառվություններ ըստ սպրանքաշրջանառութային ընթա-
ցիկ վարկավորման» յենթահաշիվը պարտադրվում է փոխառ-
վութային մարման դեպքում № 2 «հաշվարկային հաշիվ Պե-
տրանկում» հաշվի կամ փոխառվութային մարման ժամկետանցման
դեպքում «ժամկետին չվճարված փոխառվություններ» յենթա-
հաշվի պահանջադրումով:

Փոխառվութային յուրաքանչյուր գումարի վերաբերմամբ
պետք է սահմանել հատուկ հսկողություն այնպես, վոր վոչ մի
դեպքում տեղի չունենա ժամկետանցում:

Հաշվապահը պարտավոր է գյուղատնտեսի վարչութային նա-
խագահին նախորոք նախազգուշացնել փոխառվությունների մար-
ման առաջիկա բոլոր վճարումների մասին:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՍԵՁՈՆԱՑԻՆ
ԿՈՒՏԱԿՄԱՆ, ՆԱԽԱԺԱՄԿԵՏ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՅԵՎ ԽՐԱՍՈՒՄ-
ՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ»

Այս յենթահաշիվում հաշվառվում են սպառողական ընկերու-
թյունների կողմից Պետական բանկից ստացվող փոխառվու-
թյուններն սպրանքների նախաժամկետ ներմուծման, ճանա-
պարհների խախտման դեպքերին անհրաժեշտ պաշարների,
սպրանքների չիջեցվելիք պաշարների, հացադնումների կամ այլ
մթերումների խրախուսման սպրանքների համար:

Յենթահաշիվը պահանջադրվում է վարկի ստացման դեպ-
քում պարտադրելով № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում»
հաշիվը: Յենթահաշիվը պարտադրվում է փոխառվութային մար-
ման դեպքում № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշվի
պահանջադրումով կամ փոխառվութային ժամկետի անցման
դեպքում «ժամկետին չվճարված փոխառվություններ» յենթա-
հաշվի պահանջադրումով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՓՈՒՍՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԹԵՐՄԱՆ ԱՊՐԱՆՔ-
ՆԵՐԻ ԴԻՄԱՅ»

Այս յենթահաշիվում հաշվառվում են մթերումների կատար-
ման համար Պետական բանկից ստացված փոխառվությունները:

Մթերման դրասենյակից մթերման համար անմիջականորեն
ստացված փոխառվությունները այս յենթահաշիվում չեն ար-
տացուցվում, այլ արտացուցվում են № 10 հաշիվում (յենթահաշիվ
«Հաշվարկներ Ծրվապահոտու միութային մթերման դրասենյակի
հետ»):

«Փոխառվություններ մթերման սպրանքների դիմաց» յեն-
թահաշիվը պահանջադրվում է վարկի ստացման դեպքում № 2
«հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշվի պարտադրումով և
պարտադրվում է № 2 հաշվի պահանջին փոխառվութային մար-
ման դեպքում կամ «ժամկետին չվճարված փոխառվություններ»
յենթահաշիվի պահանջին՝ վճարումների ժամկետանցման դեպ-
քում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԲԼԱՆԿԱՅԻՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս յենթահաշիվով սպառողական ընկերություններում հաշվառվում են շրջանառու միջոցների հաշվին կապիտալ ներդրումները կատարման կապակցությամբ Պետրանկից ստացվող փոխառվությունները շրջանառու միջոցների լրացման համար: Վոչ մի դեպքում չի թույլատրվում այդպիսի փոխառվությունները հաշվառել «ստացված փոխառվություններ շահագործման չհանձնված ներդրումները համար» յենթահաշիվ: «Բլանկային փոխառվություններ» յենթահաշիվը պահանջադրվում է փոխառվություններ ստանալու դեպքում «հաշվարկային հաշիվ Պետրանկում» № 2 հաշվի պարտադրումով և պարտադրվում է փոխառվությունների մարման դեպքում (№ 2 հաշվի պահանջադրումով և «Ժամկետին չվճարված փոխառվություններ» յենթահաշիվի պահանջադրումով՝ փոխառվության ժամկետանցման դեպքում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՅԼ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«Այլ փոխառվություններ» յենթահաշիվով հաշվառվում են Պետրանկից յտացված փոխառվությունները նյութերի, տարայի սրահպանման, ստացարանների սառույց լցնելու և այլ վոչ առևտրական բնույթի գործառնությունների վարկավորման համար:

«Այլ փոխառվություններ» յենթահաշիվը պահանջադրվում է փոխառվություններ ստանալու դեպքում «հաշվարկային հաշիվ Պետրանկում» № 2 հաշվի պարտադրումով և պարտադրվում է փոխառվությունների մարման դեպքում № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշվի պահանջադրումով և «Ժամկետին չվճարված փոխառվություններ» յենթահաշիվի պահանջադրումով՝ փոխառվությունների ժամկետանցման դեպքում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են Պետրանկից ստացված և ժամկետին չվճարված բոլոր կարճատեղ փոխառվությունները: «Ժամկետին չվճարված փոխառվություններ» յենթահաշիվը

պահանջադրվում է փոխառվությունների ժամկետացման դեպքում՝ պարտադրելով Պետրանկից ստացված կարճատե փոխառվություններ հաշվառող յենթահաշիվները և պարտադրվում է փոխառվությունների մարման դեպքում — պահանջադրելով «հաշվարկային հաշիվ Պետրանկում» № 2 հաշիվը:

№ 15 ՀԱՇԻՎ «ՆՅՈՒԹԵՐ»

Այս հաշիվով հաշվառվում են հումուլթը և արտադրական նյութերը՝ շինանյութերը, անտեսության անհրաժեշտ նյութերը, գույքն ու արտահագուստը (սպեցհագուստ): «Նյութեր» հաշիվով բացվում են հետևյալ յենթահաշիվները՝

1. Հումուլթ և նյութեր արտադրություն համար:
2. Տնտեսական նյութեր:
3. Մանր գույք և արտահագուստ շահագործման մեջ:
4. Կենդանիներ դերացման մեջ և մատղաչ անասուններ:

Սպառողական ընկերություններում վորպես կանոն նյութերի հաշվառումը տարվում է ինքնարժեքով (զնման արժեքը դումարած մինչև պահպանման վայրը փոխադրական ծախսերը), ընդ վորում նյութերի փոխադրական ծախսերը անալիտիկ հաշվառման մեջ առանձնացվում են հատուկ հաշվառման քարտում:

Թույլատրվում է դյուղկոտայներում ձեռք բերվող նյութերի աննշան պարտիաները (քանակ) հաշվառել զնման գներով:

Այս դեպքերում նյութերի փոխադրական ծախսերը հաշվառվում են № 8 «շրջանառության ծախսեր» կամ № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվում ըստ պատկանելույնի:

Նյութերի անալիտիկ հաշվառումը կատարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի, նյութերի տեսակների, քանակի և դումարով:

№ 15 «նյութեր» հաշիվը պարտադրվում է ստացվող նյութերի դումարի արժեքով, պահանջադրելով ըստ պատկանելույնի № 9 դերիտորներ և կրեդիտորներ», № 10 «հաշվարկներ շրջանառությունում իրության հետ», № 1 «գրամարկը», № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» և այլ հաշիվները:

«Նյութեր» հաշիվը պահանջադրվում է՝
ա) № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի

պարտքին՝ արտադրութեան մեջ ծախսված նյութերի ինքնարժեքով:

բ) № 20 «կապիտալ ներդրումներ» հաշվի պարտքին՝ կապիտալ շինարարութեան վրա ծախսված շինանյութերի ինքնարժեքով:

գ) № 8 «չբջանառութեան ծախսեր» հաշվի պարտքին՝ առևտրական ու մթերման ձեռնարկութեան ներքո ծախսված տնտեսական նյութերի գուրս գրված գումարների չափով:

դ) «Անձեր ըստ պակասումների» (բացի մանր գումարներէրից) կամ «անձեր ըստ մանր պակասումների ընդհանուր քաղաքացիական կարգով վանձման յենթակա» — յենթահաշիվների պարտքին (ըստ պատկանելույն) բնական պակասորդների սահմանված նորմաներից բարձր պակասորդների համար:

ե) «Անձեր ըստ վրահաշիվումների» յենթահաշիվի պարտքին նյութապես պատասխանատու անձի մեղքով նյութերի խոտանի, ջարդվածքի և փչացման արժեքի չափով:

զ) № 8 կամ № 16 հաշիվների պարտքին ըստ պատկանելույն — բնական պակասորդի նորմաների սահմանում նյութերի պակասորդի գումարի չափով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀՈՒՄՈՒՅԹ ԾԵՎ ՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են սպառողական ընկերութեան սեփական ձեռնարկութեան ներքո արտադրանքների պատրաստման, այլ կազմակերպութեան ներքո ձեռնարկութեան ներքո մերձաշակման և շինարարութեան համար նախորոշված հումուրներն ու նյութերը:

Այս նույն յենթահաշիվին են հաշվառվում նաև ճաշարանին կից պահեստի (մառանի) մթերքները և արտադրական ձեռնարկութեան ներքո կից վառելիքը (վառելանյութերը):

Այս նյութերի հաշվառումը կատարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի, տեսակների, գումարով և քանակով:

Հումուրների և նյութերի հաշվառման նման կարգը արտադրության համար բերված է Յենտրոսոյուզի հաշվառման և հաշվետվութեան բաժնի կողմից հրատարակված հոդվածում, հասարակական սննդի և այլ արտադրական և ոժտանդանի ձեռնարկութեան ներքո հաշվառման վերաբերյալ հրահանգներում:

Այս հաշիվով հաշվառվում են վոչ արտադրական բնույթի գանադան նյութեր (փաթեթանյութեր, մոմ, նավթ լուսավորութեան համար, առևտրական գրասենյակին շինքերի տարացման համար վառելանյութեր և այլն):

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԳՈՒՅՔ ԾԵՎ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՁ»

Մանր գույքին են վերաբերվում՝

ա) Այն բոլոր առարկաները, վորոնց մաշման ժամկետը մինչև մեկ տարի յե՝ անկախ այդ առարկաների արժեքից:

բ) Բոլոր կտորվող և շուտ մաշվող ամանեղենը հասարակական սննդի ձեռնարկութեան ներքո բացի թանկարժեք սերվիզներից և այլն:

գ) Այն բոլոր առարկաները մի տարուց ավելի մաշման ժամկետով, վորոնց մի միավորի արժեքը 200 ո. ցածր է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ծեղերը, դրագարանները, փեթակները, բանոց անասունները, արտադրող կենդանիները և թռչունների արտադրական յերձմանը անկախ միավորի արժեքից հաշվառվում են «հիմնական միջոցներ» հաշիվով:

Այս հաշիվով հաշվառվում են շահագործման մեջ գտնվող գույքն ու արտահագուստը: Յեթե գյուղկոտորում կան գույքի և արտահագուստի սրաչարներ պահեստում, ապա նրանց արժեքը հաշվառվում է «տնտեսական նյութեր» յենթահաշիվով:

Շահագործման մեջ գտնվող գույքի և արտահագուստի փաստական մաշումը գուրս է գրվում ինվենտարիզացիայի ժամանակ, ինվենտարիզացիոն հանձնաժողովի ակտի հիման վրա:

Այդ գուրս գրումներն անհրաժեշտ է կատարել կվարտալը մեկ անգամ, (կվարտալային ինվենտարիզացիայի ավյալների համաձայն):

Շահագործման մեջ գտնվող գույքի և արտահագուստի գնների իջեցման ակտի համաձայն կատարվում է հաշվապահական

ձևակերպում՝ «նյութեր» № 15 հաշվի պահանջին («չահագործման մեջ դանվող գույք և արտահագուստ» յենթահաշվով) և № 8 «չըջանառության ծախսեր» կամ համապատասխանորեն № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի սրբաբերին:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԳԵՐԱՑՄԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՄԱՏՂԱՇ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ»

Այս հաշիվը նախորդված է մատղաշ անասունների և աճեցման ու զերացման մեջ դանվող անասունների հաշվառման համար: Ռժանդակ զրքերում անհրաժեշտ է սպահարկել մատղաշ անասունների և զերացման մեջ դանվող անասունների ստանձնացված հաշվառում:

Յենթահաշիվը սրբաբերվում է ջահել անասունների ծինի արժեքով կոնվենցիոն դներով հաշված, այլ և զերացման տրբված անասունների սկզբնական արժեքի դումարով: Բացի այդ «կենդանիներ զերացման մեջ և մատղաշ անասունների» յենթահաշիվը սրբաբերվում է ամեն ամիս անասունների զերացման և աճեցման համար կատարվող ծախսերի դումարով՝ պահանջագրելով № 16 «Ձեռնարկությունների շահագործում» հաշիվը, փորտեղ այդ ծախսերը ամսվա ընթացքում հաշվառվում են:

Յենթահաշիվը պահանջարկվում է՝

ա) Գերացման տրված կենդանիների սեռիկացիայի դեպքում՝ սրբաբերելով № 5 «մթերման ապրանքներ» հաշիվը զերացման տրված կենդանիների փաստական արժեքի դումարով:

բ) Գերացումից հանված կենդանիների միսը սեփական ճաշարաններում ոգտագործելու դեպքում—սրբաբերելով № 15 հաշիվը («հումուլթ և նյութեր արտագրության համար» յենթահաշիվը):

գ) Սեփական մանրածախս առևտրական ցանցին սեռիկացիայի համար հանձնելու դեպքում—սրբաբերելով № 3 «ապրանքների մուսք և դնահատում»—հաշիվը:

դ) Մատղաշ անասունները հիմնական միջոցներին փոխանցելու դեպքում—սրբաբերելով № 20 «կապիտալ ներդրումներ»

հաշիվը: Անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ նյութական պատասխանատու անձերի և կենդանիների տեսակների (քանակով և դումարով):

ՀԱՇԻՎ № 16 «ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՄՀԱԳՈՐԾՈՒՄ»

Այս հաշիվը հաշվառվում են սպառողական ընկերության սրբաբերական ձեռնարկություններում պատրաստի արտադրանքների մշակման (փուռ, ճաշարան, յերչիկանոց և այլն), ոժժանդակ ձեռնարկությունների շահագործման (տրանսպորտ, սեփական տներ և այլն) և վերամշակման գործառնությունները:

Սրբաբերական և ոժժանդակ ձեռնարկությունների հաշվառումը դնելիս անհրաժեշտ է դեկլարավել Յենթապոյուղի հաշվառման և հաշվետվության բաժնի հրատարակած հրահանգներով:

Յուրաքանչյուր արտագրական և ոժժանդակ ձեռնարկության, այլ և վերամշակման ամեն մի տեսակի համար բացվում է առանձին հաշիվ:

«Ձեռնարկությունների շահագործում» հաշիվը սրբաբերվում է՝

ա) № 15 «նյութեր» հաշվի պահանջին՝ արտագրության կամ վերամշակման մեջ ծախսված նյութերի ինքնարժեքով:

բ) № 4 «ապրանքներ մանրածախս ձեռնարկություններում» հաշվի կամ № 5 «ապրանքներ մթերման» հաշվի պահանջին (ըստ պատկանելույն) վերամշակման հանձնված ապրանքների արժեքով:

գ) № 1 «գրամարկի» կամ № 2 «հաշվարկային հաշիվ Պետությանիում» հաշվի պահանջին—ծախսերի վճարված դումարով:

դ) № 9 «գերիտորներ և կրեդիտորներ» հաշվի պահանջին—հաշվված աշխատավորի, աշխատավարձի վրակելի, կապալի արժեքի և այլ դումարներով:

յե) № 18 «Ֆոնդեր» հաշվի պահանջին («ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշիվին)—ամորտիզացիոն ֆոնդի հատկացումների դումարով:

№ 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշիվը պահանջարկվում է սպառաստի արտագրանքի բաց թողնման սահմանված արժեքով՝ արտագրանքից նրանց թողարկման շահիով (դումարով):

Պատրաստի արտադրանքի բաց թողնման արժեքի և փաստական ինքնարժեքի մեջ յեղած տարբերությունն ամեն ամիս փոխանցվում է № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվից № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվին (ձեռնարկությունների շահագործման հետևանքները» հոդվածով) :

Արտադրական ձեռնարկությունների հետևանքների փոխանցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել չավարտված արտադրանքի մնացորդը, վերջ րիվ չափով պետք է մնա № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվում :

Յեթե № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվում հաշվառվում են վերամշակման դործառնությունները, ապա հետևանքների վոջ մի փոխանցում այս դեպքում չափաի լինել, վերջով հետև «վերամշակում» յենթահաշվի վարտադրվում է բոլոր ծախսումների արժեքով (ներառյալ և նյութերը) ըստ վերամշակման և պահանջարկում է վերամշակված արտադրանքի փաստական ինքնարժեքով : Հետևապես «վերամշակում» յենթահաշվի սալդոն բոլոր դեպքերում կարող է լինել միայն դեբիտային և ցույց է տալիս չավարտված վերամշակումը :

Այլ կաղմակերպությունների վերամշակման տրված նյութերի վերաբերմամբ ավելի ճիշտ վերահսկողություն նպատակներով (չբազայ ուղարկված հացահատիկներ, ուրիշների փոխում հաց թխելու տրված ալյուր և այլն) այդ նյութերի հաշվառումը նրանց ծախսման մասին մինչև հաշվետվություն ստանալու մոմենտը կենսագործվում է վոջ թե № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվով, այլ № 15 «նյութեր» հաշվում՝ հետագայում № 16 հաշվին փոխանցելով պատրաստ արտադրանքը՝ գյուղկոտային հանձնելու մասին փաստաթղթերի հիման վրա :

ՀԱՇԻՎ, № 17 «ԾԱԽՍԵՐ Ի ՀԱՇԻՎ ԱՊԱԳԱՅԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Այս հաշվով հաշվառվում են ի հաշվի ապագա դործառնությունների կատարված ծախսերը :

№ 17 «Ծախսեր ի հաշվի ապագա դործառնությունների» հաշվով տարվում են հետևյալ յենթահաշիվները՝

1. Ծախսեր ապագա ժամանակի
2. Կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգում :
3. Շրջանառություն ծախսեր ապրանքների մնացորդների վրա :
4. Գերածախսեր յենթակա ծածկման ի հաշիվ հատուկ ֆոնդերի :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԾԱԽՍԵՐ ԱՊԱԳԱ ԺԱՄԱՆԱԿԻ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են նախորդ կատարված ծախսերը, (լրագրերի և ամսագրերի դուրս դրումը ամբողջ տարով, նախորդ վճարված կապալավարձ, տարեկկրին կատարված ընթացիկ նորոգում և այլն) :

Այս հաշիվով արգելվում է հաշվառել պաշարի համար ձեռք բերված անտեսական նյութերը (վայտ, խոտ և այլն) : Այս նյութերը անհրաժեշտ է հաշվառել № 15 «նյութեր» հաշվով :

«Ծախսեր ապագա ժամանակի» յենթահաշիվը պարտադրվում է կատարված ծախսերի դումարով, պահանջարկերով № 1 «դրամարկղի», № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» և այլ հաշիվներին ըստ պատկանելույն :

«Ծախսեր ապագա ժամանակի» յենթահաշիվը պահանջարկում է՝ պարտադրելով № 8 «չրջանառություն ծախսեր» կամ № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշիվները (ըստ պատկանելույն) տվյալ ամսին բաժին ընկնող դալիք ժամանակի ծախսերի փոխանցումով :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԿԱՊԱԼՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՎԱՐՏՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄ»

Այս հաշիվով հաշվառվում է կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների արժեքը :

Յենթահաշիվը պարտադրվում է՝ կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների արժեքով պահանջարկերով № 20 «կապիտալ ներդրումներ» հաշիվը («կապիտալ նորոգումներ» յենթահաշիվը), ձեակերպման համար հիմք

և հանդիսանում կապարված հիմնական միջոցների կապիտալ նորոգման ընդունման մասին վարչության հաստատած ախար:

Կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգման մարումը կատարվում է տարբեր յեղանակներով— նայած թե կապարումն իր վրա վերցնում է կապիտալ նորոգման ծախսերը, թե այդ ծախսերը կատարվում են ի հաշիվ ըստ պատգամական ընկերության:

Առաջին դեպքում կատարվում է այսպիսի ձևակերպում՝

ա) № 8 «չըջանառության ծախսեր» հաշվի պարտքին («չենքի կապարվարձ» հոդված) կամ № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի պարտքին (ըստ պատկանելույն), պահանջադրելով № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշիվը («տնտեսական կապակերպություններ, հիմնարկներ և անձինք ըստ դանական հաշվարկների» յենթահաշիվ) — կապարատույի ոգտին վրահաշված կապարվարձի դումարով:

բ) № 18 «Փոնդեր» հաշվի պարտքին («հիմնական Փոնդ» յենթահաշիվ) և № 17 «ծախսեր ի հաշիվ ապագա դործանությունների» հաշվի պահանջին («կապարված հիմնական միջոցների նորոգման մարման համար նախորդ դրանցման դումարով):

գ) № 9 «դեբիտորներ և կրեդիտորներ» հաշվի պարտքին (կապարատույի հաշիվ) և № 18 «Փոնդեր» հաշվի պահանջին («ամորտիզացիոն Փոնդ» յենթահաշիվ) — ամորտիզացիոն Փոնդի հատկացումների դումարով (հիմնական կապարված միջոցների ավարտված կապիտալ նորոգումների մարման հավասար դումարով):

Յերկրորդ դեպքում, յերբ կապիտալ նորոգումը կատարվում է գյուղիտույի հաշվին, կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների մարման ժամանակ ամեն ամիս կատարվում են հետևյալ գրանցումները՝

ա) № 18 «Փոնդեր» հաշվի պարտքին («հիմնական Փոնդ» յենթահաշիվ) և № 17 հաշվի պահանջին («կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումներ» յենթահաշիվը այդ նորոգումների մասի (բաժնի) դուրս գրման դումարով:

բ) № 8 «չըջանառության ծախսեր» հաշվի պարտքին («կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների

դումների ամորտիզացիա» հոդվածը) կամ № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի պարտքին (ըստ պատկանելույն) — № 18 «Փոնդեր» հաշվի պահանջին («ամորտիզացիոն Փոնդ» յենթահաշիվ) — ամորտիզացիոն Փոնդի հատկացումների համար, (նախորդ գրանցման հավասար դումարով):

Կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների մարումը կատարվում է ամեն ամիս՝ կապարվարձի վճարելիք դումարին հավասար, յնթե կապարատուն կապարվարձի հաշվին է ընդունում կապիտալ նորոգման ծախսերը, կամ նայած կապարման պայմանագրի ժամկետին՝ յերբ կապարատուն կապարվարձի հաշվին չի ընդունում կապարված կապիտալ նորոգումը:

Այն դեպքերում, յերբ նորոգման կապարման ժամկետը կապարման ժամկետից ավելի կարճ է, ապա ամեն ամիս դուրս դրելիք բաժինը հաշվելիս հաշվի յե առնվում նորոգման կապարման ժամկետը:

ՅԵՆԹԱՀԱՇՎ «ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ ԱՊՐԱՆԻՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՎՐԱ»

Այս յենթահաշիվով հաշվառվում են ամեն ամիս վերջում առևտրական մանրածախ ձեռնարկությունների մնացորդ ապրանքների վրա ընկնող չըջանառության ծախսերը:

Ապրանքների մնացորդի վրա ընկնող չըջանառության ծախսերի փոխանցումը կատարվում է հետևյալ հոդվածներով՝

ա) Յերկրայթուղային ու ջրային տրանսպորտ:

բ) Ավտոգուժ տրանսպորտ:

գ) Ապրանքների լրացուցիչ մշակում, տեսակավորում և փաթեթում:

դ) Ապրանքների կորուստ ճանապարհին:

յե) Կորուստներ ըստ տարայի:

Ապրանքների մնացորդների վրա ընկնող չըջանառության ծախսերը հաշվվում են հետևյալ կարգով՝

Հաշվապահական տվյալների հիման վրա վորոշվում է ամսվա ընթացքում մանրածախ առևտրական ձեռնարկությունների ապրանքների մուտքի դումարը, այդ դումարին ավելացվում է ապրանքների մնացորդն ամսվա սկզբին:

Այդ ժամանակաշրջանի համար վորոշվում և շրջանառութ-
թյան ծախսերի գումարը՝ ներառյալ նաև ամսի սկզբին սպրան-
քային մնացորդների շրջանառության ծախսերը՝ վերը բերած
հոդվածներով:

Այդ հոդվածներից յուրաքանչյուրի վերաբերմամբ վորոշ-
վում և շրջանառության ծախսերի միջին տոկոսը:

Կիրառելով այդ տոկոսը վերը հիշված յուրաքանչյուր հոդ-
վածի վերաբերմամբ՝ վորոշվում և սպրանքների մնացորդի վրա
շրջանառության ծախսերի այն գումարը, վորը յենթակա յե
№ 8 «շրջանառության ծախսերից» «շրջանառության ծախսեր
սպրանքների մնացորդի վրա» յենթահաշվին փոխանցման:

Հետևյալ ամսի մեկին արվում և դրան հակառակ հաշվապա-
հական դրանցում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԾԱԽՍԵՐ ՅԵՆԹԱԿԱ ՄԱՍԻՄԱՆ Ի ՀԱՇԻՎ ՀԱՏՈՒԿ ՖՈՆԴԵՐԻ»

Գյուղկոտայները ծախսերն ի հաշիվ հատուկ ֆոնդերի վոր-
պես կանոն պիտի կատարվեն հատուկ ֆոնդերում հաշվառված
գումարների սահմաններում:

Բացառիկ դեպքերում, յերբ հատուկ ֆոնդի հաշվին կատար-
ված ծախսը (որինակ կադրերի պատրաստման ֆոնդին) այդ
ֆոնդի գումարից դերազանցելու լինի՝ ֆոնդին հատկացում ա-
նելու և փաստորեն ֆոնդի հաշվին կատարվող ծախսի ժամա-
նակի ճեղքվածքի հետևանքով—այդպիսի դերածախսերը պիտի
տրտացուի «դերածախսեր յենթակա ծածկման ի հաշիվ հատուկ
ֆոնդերի» յենթահաշվում: Հետագայում նոր ծախսերի կատար-
ումն ի հաշիվ համապատասխան հատուկ ֆոնդի պիտի դա-
դարեցնել մինչև վոր դերածախսի գումարները կծածկվի նոր
հատկացումներ կատարելով այդ ֆոնդի հաշվին:

«Գերածախսեր յենթակա ծածկման ի հաշիվ հատուկ ֆոն-
դերի» յենթահաշիվը պարտադրվում և փաստորեն կատարված
ծախսերով՝ պահանջադրելով № 1 «դրամարկի» հաշիվը, № 2
«հաշվարկային հաշիվ Պետբանկում» հաշիվը և այլն:

«Գերածախսեր յենթակա ծածկման ի հաշիվ հատուկ ֆոն-
դերի» յենթահաշիվը պահանջադրվում և պարտադրելով № 18

«ֆոնդեր» հաշիվը («կադրերի պատրաստման ֆոնդ» և այլ «հա-
տուկ ֆոնդեր» յենթահաշիվը) նայած թե դերածախսը վոր
ֆոնդի հաշվին և կատարված:

ՀԱՇԻՎ № 18 «ՖՈՆԴԵՐ»

№ 18 «ֆոնդեր» հաշիվն ունի հետևյալ յենթահաշիվները՝

1. Հիմնական ֆոնդ:
2. Պահեստի ֆոնդ:
3. Ամորտիզացիոն ֆոնդ:
4. Կադրերի պատրաստման ֆոնդ:
5. Դիրեկտորական ֆոնդ:
6. Այլ հատուկ ֆոնդեր:

Անպիտիկ հաշվառման մեջ «այլ հատուկ ֆոնդեր» յենթա-
հաշիվին բացվում են առանձին հաշիվներ յուրաքանչյուր հատուկ
ֆոնդի:

Ֆոնդերի կազմելու և ոգտադործման կարգը վորոշվում և
ձևորոտցուղի հատուկ կանոնադրություններով և հրահանգ-
ներով:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴ»

«Հիմնական ֆոնդ» յենթահաշիվով հաշվառվում են փայա-
տերերի անվերադարձ մուծումները, զուտ ոգուտից կատարվող
հատկացումները (նախորդ տարիների ոգուտների բաշխման
կարգով) և տարբեր անվերադարձ մուծքերը, վորոնք յենթակա
չեն յեկամտահարկի (փոխառության տոմսերի շահումներ,
փոխառության տոկոսներ, հիմնական միջոցների ձրի ստացում,
անվերադարձ փոխառվություններ և այլն):

«Հիմնական ֆոնդ» յենթահաշիվը պահանջադրվում և՝

ա) № 23 «կորուտներ և կուտակումներ» հաշվի պարտքին
(«նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը),
նախորդ տարիների ոգուտներից հիմնական ֆոնդին հատկացված
գումարով՝ (ոգուտների բաշխման ժամանակ):

բ) № 1 «դրամարկի» հաշվի պարտքին—փայատերերի անվե-
րադարձ մուծումների գումարով:

դ) № 21 «Հիմնական միջոցներ» հաշվի պարտքին ձրխարար ստացված հիմնական միջոցների արժեքով:

դ) № 24 «Հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշվի պարտքին (ամեն ամիս) № 24 «Հիմնական միջոցների լիկվիդացիա» — հաշվի կրեդիտային սալդոյի դումարով:

յ) «Ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշվի պարտքին կամ «Դերեկտորական ֆոնդ» յենթահաշվի պարտքին (ըստ պատկանելույն) սպառողական ընկերութան կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար սպառողական հատուկ ֆոնդերի դումարով:

Այս դրանցումը տարվում է ավարտված կապիտալ ներդրումները որչեղտները դործարկման կամ շահագործման դնելու հետ միաժամանակ:

դ) «Ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշվի պարտքին կապիտալ ներդրումների ավարտված որչեղտների ֆինանսավորման համար ստացված փոխատվությունները մարման հետ միաժամանակ՝ փոխատվության վճարման հավասար դումարով կամ «ամորտիզացիոն ֆոնդ» յենթահաշվի սահմաններում յենթե վերջինս ավելի պակաս է փոխատվության վճարման դումարից:

ե) դանդաղան հաշվիները պարտքին՝ անվճար ստացված արժեքների դումարով (կազմակերպությունները ձուլման և այլ դեպքերում):

«Հիմնական ֆոնդ» յենթահաշվի պարտադրվում է՝

ա) Չանազան հաշիվների պահանջին, այլ կազմակերպությունների անվճար հանձնվող միջոցների արժեքով:

բ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պահանջին (նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվ) նախորդ տարիների դուրս դրվող վնասների դումարով (յերբ պահեստի ֆոնդը բացակայում է կամ չի բավականացնում):

դ) № 22 «ուրիշներին տրամադրված միջոցներ» հաշվի պահանջին («դումարներ յենթակա դուրս դրման ի հաշիվ հիմնական ֆոնդի» յենթահաշիվ) — հիմնական ֆոնդից դուրս դրման յենթակա դումարների փոխանցման չափով (հիմնական ֆոնդի սալդոյի սահմաններում):

դ) № 24 հաշիվ պահանջին (ամեն ամիս) «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշվի դերետային սալդոյի դումարով:

յ) № 25 «հիմնական միջոցների մաշում» հաշվի պահանջին — (ամեն ամիս) սեփական հիմնական միջոցների մաշման վրա հաշվված դումարով:

դ) № 17 «ծախսեր ի հաշիվ սպառող դործառնությունների» հաշվի պահանջին («կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումներ» յենթահաշիվ) կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների ամեն ամիս մարման դումարով:

(Տես «կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգում» — յենթահաշիվ պարզաբանումը):

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ՖՈՆԴ»

Պահեստի ֆոնդին հատկացումները կատարվում են ԽՍՀՄ կենտրոնական և Ժողովրդիկոնսուլտի 1932 թ. ոգոստոսի 27-ի № 1279 վերջման հիման վրա ամեն տարի ոգուտների բաշխման ժամանակ: Ֆոնդը նշանակվում է անցյալ ժամանակի վնասները ծածկելու համար:

Պահեստի ֆոնդին հատկացված միջոցները մնում են սպառողական ընկերության անորինության տակ և վերադաս կոտպետով կազմակերպությունների կողմից չեն կարող հանվել:

«Պահեստի ֆոնդ» յենթահաշիվը պահանջադրվում է պարտադրելով № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը («անցյալ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը) պահեստի ֆոնդին արված հատկացումների դումարով:

Յենթահաշիվը պարտադրվում է պահանջադրելով № 23 հաշիվը («նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը) — նախորդ տարիների վնասների մարման դումարով: («Պահեստի ֆոնդ» յենթահաշիվ սալդոյի սահմաններում, սակայն դուրս յեկած վերադաս կազմակերպություններին պահեստի ֆոնդի հաշիվին առաջուց մուծած դումարները):

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ՖՈՆԴ»

Ամորտիզացիոն ֆոնդին հատկացումները կատարվում են ԽՍՀՄ Ժողովրդիկոնսուլտի 1936 թ. 29 հուլիսի № 1372 վերջման համապատասխան Յենտրոսոյուզի սահմանած նորմաներով և

ա) № 8 «չրջանառության ծախսեր» հաշվի պարտքին— (առևտրական և մթերման շրջանառությունից հատկացումներ անելիս) :

բ) № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի պարտքով (հացաթխման, հասարակական սննդի և վոչ վոզելից խմիչքների արտադրական ձեռնարկություններում)— վերադաս կազմակերպությունների սահմանված նորմաներով ամեն ամիս կատարվող հատկացումների դումարով :

«Կադրերի պատրաստման ֆոնդ» յենթահաշիվը պարտադրվում է պահանջադրելով № 1 «դրամարկի» հաշիվը և № 2 «հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշիվը— կադրերի պատրաստման հաշիվին կատարված ծախսերի դումարով կամ պահանջադրելով № 10 «հաշվարկներ շրջմիության վարչության հետ» հաշիվը— շրջմիության հասանելիք դումարների չափով— և հաշիվ սպառողական ընկերության կադրերի ուսուցման վերաբերմամբ պայմանագրով նրան վճարելիք դումարների :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԴԻՐԵԿՏՈՐԱԿԱՆ ՖՈՆԴ»

Այս ֆոնդը կազմելու համար հատկացումներ կարող են անել միայն այն սպառողական ընկերությունները, վորոնք համաձայն ԽՍՀՄ Ֆինիստրատի (համաձայնեցված Յենտրոսոյուզի հետ) հրահանգի կարող են դիրեկտորական ֆոնդ ունենալ :

Այդ ֆոնդը կազմելու համար հատկացումները կարգը, հատկացումների նորմաները և դիրեկտորի ֆոնդի ծախսման կարգը սահմանվում է հատուկ հրահանգով :

«Դիրեկտորական ֆոնդ» յենթահաշիվը պահանջադրվում է այդ ֆոնդին ավանսային հատկացումների դումարով՝ պարտադրելով № 22 «ուրիշներին տրամադրված միջոցներ» հաշիվը («հատկացումներ դիրեկտորական ֆոնդին տարվա ընթացքում» յենթահաշիվ) : Բացի այդ՝ յենթահաշիվը պահանջադրվում է ոգուտներ լի : Բացի այդ՝ յենթահաշիվը պահանջադրվում է ոգուտներ լի բաշխման ժամանակ հայտնաբերված տարբերության դումարով՝ տարբերության վոր պարզվում է դիրեկտորի ֆոնդին հասցով՝ տարբերության վոր պարզվում է դիրեկտորի ֆոնդին հասցով վերջնական հատկացումից տարեկան ոգուտների բաշխման նոր վերջնական հատկացումից տարեկան ոգուտների բաշխման ժամանակ և նախորդ հատկացված (ավանսային) հատկացումներից :

«Դիրեկտորական ֆոնդ» յենթահաշիվը պարտադրվում է հրահանգին համապատասխան և վերադաս կազմակերպության կողմից հաստատված սլանով կատարված ծախսերի դումարով պահանջադրելով № 1 «դրամարկի» հաշիվը, № 2 «հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշիվը և այլ հաշիվներ ըստ պատկանելուն :

Յեթե դիրեկտորի ֆոնդն ոգուտործվել է վորպես կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուր, ապա այդ ներդրումների ավարտված և դիրեկտորի ֆոնդից ֆինանսավորված ուրիշների շահագործման հանձնելու հետ միաժամանակ— հաշվապահական ձևակերպում է կատարվում (այն դումարին հավասար չափով, վորպես դումարը դիրեկտորի ֆոնդից ծախսված է այդ նպատակին) : «Դիրեկտորական ֆոնդ» յենթահաշիվը պարտադրվում է «հիմնական ֆոնդ» յենթահաշիվը պահանջադրումով :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ՖՈՆԴԵՐ»

Ինչպես վերևն ենք ցույց տվել— յուրաքանչյուր հատուկ ֆոնդի համար բացվում է առանձին հաշիվ :

Սպառողական ընկերություններում կարող են լինել հետևյալ հատուկ ֆոնդերը՝

ա) Գյուղկոտայի ստախանովականների և դերադանցիկների պարզևտրման ֆոնդ, վորը դանվում է գյուղկոտայի վարչության տրամադրության տակ, այդ ֆոնդին հատկացումներ են կատարվում Յենտրոսոյուզի նախադասության վորոշումների հիման վրա սահմանված չափով նախորդ տարվա դուտ ոգուտներին :

Այդ ֆոնդը կազմելիս պարտադրվում է № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը («նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը) :

բ) Վարչա-կառավարչական ապարատի պարզևտրման ֆոնդ՝ համաձայն 1935 թ. 17 հունիսի որենքի : Այդպիսի ֆոնդ կարող են ունենալ միայն քաղկոտայները, վորովհետև միայն վերջիններս համաձայն Ֆինիստրատի հրահանգի ունեն առաջին հերթին վարչա-կառավարչական ապարատ : Քաղկոտայնե-

րում այդ Փոնդը կազմելիս պարտադրվում է № 8 «չըջանառության ծախսեր» հաշիվը («ընդհանուր վարչա-կառավարչական ծախսեր» յենթահաշիվ) պահանջադրելով «այլ հատուկ Փոնդեր» յենթահաշիվը:

դ) Վաճառողների պարզեւատրման Փոնդ «դրավիկիտոր-վոդե-կայի» արտադրանքներից դատարկ ամանեղենի հավաքելու համար՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թ. 10 հոկտեմբերի № 1796 վորոշման համապատասխան:

Այդ Փոնդը կազմվում է դրավիկիտորվոդկայի ձեռնարկություններից միջոցներ ստանալու մոմենտին, այսինքն № 2 «հաշվարկային հաշիվ Պետ-բանկում» հաշվի պարտադրումով:

դ) Վաճառողների սրարզեւատրման Փոնդ հրուշակային ապրանքների վաճառքի պլանի գերակատարման համար՝ Փոնդը կազմվում է համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից տնտեսական խորհրդի 1938 թ. մայիսի 17-ի № 325 վորոշման:

Այդ Փոնդի հաշվապահական գրանցումները նման են «զ» կետում ցույց տրված գրանցումներին:

յե) Այլ դերատեսչություններից ստացված միջոցներից կազմվող մթերումների պարզեւատրման Փոնդ— (միայն չըջկոտի մթերման գրասենյակում):

Այդ Փոնդի կազմելու համար հաշվապահական գրանցումները նման են «զ» և «դ» կետերում ցույց տրված գրանցումներին:

ՀԱՇԻՎ № 19 «ՌԵԶԵՐՎՆԵՐ ԸՍՏ ՎԻՃԵԼԻ ՊԱՐՏՔԵՐԻ»

Վիճելի պարտքերի ռեզերվը կազմվում է տարեվերջին յեզրափակման հաշվեկշիռ կազմելիս այն վիճելի պարտքերից, վորոնք այդ մոմենտին դառնում են դատաքննչական մարմիններում կամ արբիտրաժում:

Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. 29 հուլիսի վորոշման յեզրափակման հաշվեկշիռ կազմելիս վրահաշվիչ ռեզերվի դումարը չի կարող գերազանցել յուրաքանչյուր վիճելի սրարտքի 25%-ից:

Վիճելի պարտքերի ռեզերվը պիտի վակվի դատարանի վրճիոն ստանալուն պես ստորև բերված կարգով:

Յեթե մինչև հաշվային տարվա հետեյալ տարին չի ստացվել

դատարանի կամ արբիտրաժի վճիռը, ապա յեզրափակման հաշվեկշիռ կազմելիս անհրաժեշտ է վիճելի պարտքի ռեզերվին վրահաշվված ամբողջ դումարը դրանցել յեկամուտների հաշվին № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պահանջին («յեկամուտներ չողտադործված ռեզերվներից» հողվածով): Իսկ այդ նույն սրարտքով նոր ռեզերվ ստեղծելու հարցը վորոշել բոր մնացած դատական-քննչական մարմիններում կամ արբիտրաժում դառնալով վիճելի պարտքերի հետ ընդհանուր հիմունքներով:

№ 19 հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է յուրաքանչյուր ռեզերվացված պարտքի վերաբերմամբ դժային ձևով:

«Ռեզերվներ ըստ վիճելի պարտքերի» հաշիվը պահանջադրվում է ռեզերվի հաշվելիս № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պարտադրումով:

Ռեզերվներ ըստ վիճելի պարտքերի» հաշիվը պարտադրվում է.

ա) «Վիճելի պարտքեր» յենթահաշվի պահանջին դատարանի կամ արբիտրաժի մերժման հետևանքով վիճելի պարտքը վրասի հաշվին դուրս գրելիս— դուրս գրման դումարով (տվյալ պարտքի դիմաց ստեղծված ռեզերվի պահանջներում):

բ) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվի պահանջին («յեկամուտներ չողտադործված ռեզերվներից» հողվածին) այն վիճելի պարտքի ռեզերվի դումարով, վոր փոխանցված է «դերիտորներ ըստ դատարանի կամ արբիտրաժի վորոշման» յենթահաշվին սյառողական ընկերության ոգտին հայցի բավարարման հետևանքով կամ այն բոլոր վիճելի պարտքերի դումարից, վորոնք դատարանի կամ արբիտրաժի կողմից մինչև հաշվական տարվա վերջը չեն վճուվել դյուղկոտպի ոգտին:

ՀԱՇԻՎ № 20 «ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»

№ 20 «կապիտալ ներդրումներ» հաշվով սյառողական ընկերություններում հաշվառվում են բոլոր պլանային և արտասյառային կապիտալ ծախսումները:

«Կապիտալ ներդրումներ» հաշվին ունի հետեյալ յերեք յենթահաշիվները՝

1. Նոր շինարարություն, լայնացում և վերակառուցում:

2. Հիմնական միջոցների ձեռք բերում:

3. Կապիտալ նորոգումներ:

№ 20 «Կապիտալ ներդրումներ» հաշիվը պարտադրվում է պահանջադրելով № 1 «Դրամարկի» № 2 «Հաշվարկային հաշիվ Գեո-բանկում», — № 9 «Դերիտորներ և կրեդիտորներ», № 15 «Նյութեր» և այլ հաշիվներ ըստ պատկանելույն՝ կապիտալ ներդրումները վերաբերմամբ փաստորեն կատարված ծախսումների դումարով:

«Կապիտալ ներդրումներ» հաշիվը պահանջադրվում է՝

ա) № 21 «Հիմնական միջոցներ» հաշվի պարաքին կապիտալ ներդրումները կառուցված կամ ձեռք բերված որակների արժեքով՝ ներառյալ նաև հիմնական միջոցների լայնացումն ու վերակառուցումը, վորոնք բարձրացնում են նրանց սկզբնական արժեքը:

բ) № 25 — «Հիմնական միջոցների մաշում» հաշվի պարաքին սեփական հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների արժեքով:

գ) № 17 «Ծախսեր ի հաշիվ ապագա դործառնությունների» հաշվի պարաքին («կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումներ» յենթահաշիվը) — կապարված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների արժեքով:

դ) № 15 «Նյութեր» հաշվի պարաքին — չորստարրերով և հանձնված շինանյութերի մնացորդի արժեքով:

«Նոր շինարարություն, լայնացում և վերակառուցում» յենթահաշիվով հաշվառվում են մագաղինների, խանութների, փոսերի, ճաշարանների, բնակելի տների և այլ կառուցումների շինարարության ծախսումները. այլ և սպառողական ընկերության ունեցած շենքերի լայնացման ու վերակառուցման ծախսերը (հարմարեցում, վերադասավորում):

Այս յենթահաշիվի անալիտիկ հաշվառումը տարվում է կապիտալ ներդրումների յուրաքանչյուր որակի վերաբերմամբ առանձին:

Շինարարության ավարտված որակների շահագործման ընդունումը կատարվում է սպառողական ընկերության վարչության նշանակած հանձնաժողովի կողմից կազմված ակտի համաձայն:

«ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ» յենթահաշիվով հաշվառվում են պատրաստի որակների ձեռք բերումները (տան դեում, ավտոմեքենայի, ձիերի ձեռք բերում և այլն):

«ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ» յենթահաշիվով հաշվառվում է սեփական և կապարված հիմնական միջոցների կապիտալ նորոգումների աշխատանքների կատարումը:

Անալիտիկ հաշվառումը տարվում է կապիտալ նորոգումները յենթարկիվող որակներից յուրաքանչյուրի համար առանձին:

ՀԱՇԻՎ № 21 «ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ»

№ 21 «Հիմնական միջոցներ» հաշիվով հաշվառվում են սպառողական ընկերության պատկանող բոլոր հիմնական միջոցները:

№ 21 «Հիմնական միջոցներ» հաշիվով չեն հաշվառվում այն առարկաները, վորոնց արժեքը 200 ուսրլուց ցածր է՝ անկախ նրանց պետքական լինելու ժամկետից, այլ և այն առարկաները, վորոնց պետքական լինելու ժամկետը մի տարուց չի գերազանցում անկախ յուրաքանչյուր որակի արժեքից:

ՄԱՆՈՒՌՈՒՅՈՒՆ. — Արտադրող անասունները, թռչունների արտադրող յենթաները, բանող անասունները, մեղվի փեթակները, դրողարանները, շենքերը, կառուցումները և սնկարանները հաշվառվում են «հիմնական միջոցներ» հաշիվով անկախ յուրաքանչյուր որակի արժեքից:

Հիմնական միջոցները հաշվառվում են նրանց ձեռք բերման կամ պատրաստման սկզբնական արժեքով, ներառյալ նաև նրանց փոխադրման ու շահագործման հանձնելու, տեղում կառուցելու, ստորագրելու ծախսերը: Հիմնական միջոցների մաշումը չի կարող դուրս գրվել «հիմնական միջոցներ» հաշվից, վորովհետև վերջիններս, ինչպես ցույց ենք տվել վերևում, մինչև նրանց պետքական լինելու վերջը պիտի հաշվառվեն իրենց սկզբնական արժեքով: Հենց այդ պատճառով հիմնական միջոցների մաշումը արտացոլվում է առանձին (կոնտրակտիվային) № 25 «հիմնական միջոցների մաշում» հաշվում (տես այդ հաշվին վերաբերվող պարզաբանումները):

Հաշվեկշռում բոլոր հիմնական միջոցները ցույց են տալիս վում ընդհանուր դումարով դուրս յեկած մաշումը (բալանսային արժեք): Հիմնական միջոցների սկզբնական ու բալանսային ար-

Ժեքները տարբերութիւնը (մաշման դումարը) — բալանայի դուրս և հանվում առանց վորեւէ հաշվապահական դրանցումների, հետևապէս, վորպէսզի հաշվական բալանայի ստանանք հիմնական միջոցների սկզբնական դումարը անհրաժեշտ և «հիմնական միջոցներ» հաշվում ցույց տրված դումարին ավելացնել բալանայի դուրս «հիմնական միջոցների մաշում» հոգւածով ցույց տրված դումարը:

Հիմնական միջոցների անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ նյութապէս պատասխանատու անձերի, ըստ հիմնական միջոցների անվանումների քանակով և դումարով:

Հիմնական միջոցներ հաշվով տարվում են հետևյալ յենթահաշիվները՝

1. Ծենքեր, կառուցումներ և անկարաններ
2. Մեքենաներ և սարքավորում
3. Տրանսպորտային միջոցներ և քաշող ույժ.
ա — Մեքենայական
բ — Գուժային (քարշող)
4. Արտադրող անասուններ
5. Գուլք
6. Պաշարային հիմնական միջոցներ

Կապարված հիմնական միջոցներն այս հաշվով չեն հաշվառվում:

Նրանց հաշվառումը տարվում է արտաբալանային հաշվով, այն կարգով, վոր ցույց է տրված № 05 և № 06 հաշիվների պարզաբանման մեջ:

Ծենքեր, կառուցումներ և անկարաններ յենթահաշիվով հաշվառվում են սպառողական ընկերութեան պատկանող մազաղինների, խանութների, ճաշարանների, փոերի, պահեստների շենքերը, բնակելի տները, սարքավորումները (նայթամբարներ, բանջարեղենի պահեստներ և այլն) և յերկարակյաց բույսերի տնկարանները:

«Մեքենաներ և սարքավորում» յենթահաշիվով հաշվառվում են մեքենաները, սարքավորումն ու դործիքները՝ անկախ նրանից թէ ինչ ձեռնարկութեան մեջ են նրանք գտնվում:

«Տրանսպորտային միջոցներ և քաշող ույժ» յենթահաշիվով տարվում է անշատ հաշվառում տրանսպորտային մեքենայական և դուժ (քարշող) միջոցների ու քարշող ույժի (ավտո-

մեքենաներ տրակտորներ, մակույկներ, սահակներ, սայլեր, ձիասարքեր, ձիեր, յեղներ, եշեր և այլն):

«Արտադրող անասուններ» յենթահաշիվով հաշվառվում են չափահաս անասուն արտադրողները, այլ և խոշոր ծնող անասունները՝ խոզերը, թռչունները և այլն: Այս հաշիվով են հաշվառվում կաթնատու անասունները:

Արտադրող անասունների հաշվառումը տարվում է ըստ նյութապէս պատասխանատու անձերի, անասունների տեսակների և ցեղերի:

«Գուլք» յենթահաշիվով հաշվառվում են արտադրական, սուկտրական և դրասենյակային գուլքը՝ անկախ այն բանից թէ վորտեղ են նրանք գտնվում:

Այս յենթահաշիվով չի կարող հաշվառվել մանր գուլքը, վորովհետև վերջինիս հաշվառումը տարվում է № 15 «նյութեր» հաշիվով:

«Պաշարային հիմնական միջոցներ» յենթահաշիվով հաշվառվում են բոլոր այն հիմնական միջոցները, վորոնք գտնվում են դործածութեանից դուրս (կոնսերվացված արտադրական ձեռնարկութեաններ, պաշարային սարքավորում և այլն):

Պաշարային հիմնական միջոցների համար ամորտիզացիոն ֆոնդի հաշիվին հատկացումներ չեն արվում:

№ 21 «հիմնական միջոցներ» հաշիվը պարտադրվում է՝ ա) № 20 «կապիտալ ներդրումներ» հաշիվի պահանջին ձեռք բերված կամ նոր կառուցված (ավարտված) կապիտալ ներդրումների որյեկտների լրիվ արժեքով՝ (ներառյալ նրանց յոխտադրման ու շահագործման տեղում սարքավորելու ծախսերը)

բ) № 18 «ֆոնդեր» հաշիվի պահանջին («հիմնական ֆոնդ» յենթահաշիվ) անվճար ստացված հիմնական միջոցների արժեքով:

գ) № 18 «ֆոնդեր» հաշիվի պահանջին («հիմնական ֆոնդ» յենթահաշիվ) — ինվենտարիզացիայի ժամանակ հայտնաբերված ավելցուկ հիմնական միջոցների արժեքով:

№ 21 «հիմնական միջոցներ» հաշիվը պահանջադրվում է՝ ա) № 18 «ֆոնդեր» հաշիվի պարտքին («հիմնական ֆոնդ» յենթահաշիվ) — անվճար ուրիշներին հանձնված հիմնական միջոցների արժեքով:

բ) № 24 «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշիվի պարտ-

քին մաշուածի կամ վաճառելու հետեանքով հիմնական միջոցները դուրս դրվող հիմնական միջոցների սկզբնական արժեքով:

դ) № 9 «դերբխորներ և կրեդիտորներ» հաշի պարտքին («անձեր ըստ պակասումների— բացի մանր պակասորդներից» յենթահաշիվ կամ «անձեր ըստ մանր պակասորդների յենթակա դանձման ընդհանուր քաղաքացիական կարգով») նյութապես պատասխանատու անձերի մեղքով հիմնական միջոցների պակասորդների արժեքով:

դ) № 24 «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշի պարտքին վոչ նյութապես պատասխանատու անձի մեղքով առաջացած հիմնական միջոցների պակասորդի դումարով (տարերային պատահար և այլն):

ՀԱՇԻՎ № 22 «ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ»

№ 22 «դերիշներին տրամադրված միջոցներ» հաշի⁷ ունի հետևյալ յենթահաշիվները՝

1. Մուծումներ յերկարատև վարկավորման ֆոնդին (ՖԴԿ)
2. Մուծումներ պահեստի ֆոնդի հաշիին:
3. Մուծումներ կարգավորման ֆոնդին
4. Այլ մուծումներ հատուկ նշանակման
5. Արժեքավոր թղթեր
6. Ֆինսոզիոմատ ըստ յեկամտահարկի սրուտից
7. Տրված փոխառվածքներ
8. Գումարներ յենթակա դուրս դրման հիմնական ֆոնդի հաշիին:

9. Հատկացումներ դիրեկտորական ֆոնդին հաշվական տարվա ընթացքում:

Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1935 թ. 29 սեպտեմբերի վորոշման ՖԴԿ և կարգավորման ֆոնդին մուծումները վերացված են: Այս կապակցութամբ այդ հաշիվներում միայն հաշվառվում են այն մուծումները, վորոնք արվել են մինչև վերոհիշյալ 29 սեպտեմբերի 1935 թ. ԽՍՀՄ ԺԿՍ և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վորոշման հրատարակումը:

Պահեստի ֆոնդի հաշիին կատարվող մուծումները դադարեցված են 1936 թ. հունվարի 1-ից, համաձայն Ցենտրոսոյուզի նախադահուլթյան 1936 թվի 29 հունվարի № 81 վորոշման:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐ»

Բացի այդ սպառողական ընկերութունը, վորն առաջուց Առևտրական բանկին մուծումներ և կատարել շինարարության համար փայտերերի ավանսների հաշիին (յեթե այդ մուծումները չեն փոխանցվել ՖԴԿ-ին) և չեն ոգտադործել այդ մուծումները անվերադարձ փոխառվածքներ ստանալու համար, — ապա հիշյալ մուծումները նույնպես հաշվառում են «Այլ հատուկ նշանակման մուծումներ»-ի յենթահաշիվում:

«Այլ հատուկ նշանակման մուծումներ յենթահաշիվը պարտադրվում և Առևտրական բանկին կատարված մուծումների դումարով պահանջադրելով № 2 «հաշվարկային հաշիվ Պետբանկում» հաշիվը:

«Այլ հատուկ նշանակման մուծումներ» յենթահաշիվը պահանջադրվում և № 14 «ստացված փոխառվածքներ» հաշի պարտքին («փոխառվածքներ ստացված շահագործման չըհանձնված կապիտալ ներդրումների ուղեկանների Ֆինանսավորման համար» յենթահաշիվ) — Առևտրական բանկի անվերադարձ փոխառվածքյան հաշիին Ֆինանսավորված կապիտալ ներդրումների ավարտված ուղեկանների շահագործման մեջ մացնելու հետ միաժամանակ:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ԱՐԺԵԳԱՎՈՐ ԹՂԹԵՐ»

Այս հաշիվով հաշվառվում են սպառողական ընկերության պատկանող պետական փոխառութունների պարտատոմսերը: Մասսայական փոխառութունների այն պարտատոմսերը, վորոնք ստացված են սպառողական ընկերության աշխատակիցների բաժանորդագրությամբ, այս յենթահաշիվով չեն հաշվառվում:

Արժեքավոր թղթերի հաշվառումը կատարվում և ըստ նրանց անտակների, ցույց առնելով նրանց համարներն ու սերիաները, կուպոնների (կտրոնների) արժեքը և նրանց վճարման ժամկետը:

Սպառողական ընկերության կողմից վերադաս կազմակերպութուններին հանձնված արժեքավոր թղթերը վերջինների փրկադրման կապակցությամբ արտահայտվում են «փոխառվածքները տրված» յենթահաշիվով վերադաս կազմակերպութունների կողմից սահմանված ժամկետով այդ փոխառվածքներին պարտավորագրերի ձևակերպումով:

Այս հաշիվով հաշվառվում են սպառողական ընկերութան հաշվարկները շրջֆինրսման հետ ոգուտից վճարվող յեկամասահարկի վերաբերմամբ:

«Ֆինտոդկոմատ ըստ յեկամասահարկի ոգուտից» յենթահաշիվը պարտագրվում է ամեն կվարտալում՝ յեկամասահարկի հաշվին վճարվող ավանաների դումարով պահանջագրելով № 2 «հաշվարկային հաշիվ Պետրանկում» հաշիվը: Պահանջագրվում է հաշվական տարվա վերջին—պարտագրելով № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը («Անցյալ տարիների ոգուտները և վնասները» յենթահաշիվ) Ֆինտոդկոմատի մարմիններին հասնող յեկամասահարկի դումարով սպառողական ընկերութան հավաքական հաշվեկշռի համաձայն (31% զուտ ոգուտի դումարից):

Յեկամասահարկի վճարումը կատարվում է սպառողական ընկերութան հավաքական հաշվեկշռի զուտ ոգուտից (ներառյալ նրա բոլոր անահաշվարկային ձեռնարկությունները):

Դրա համար էլ յեկամասահարկի հաշվին ավանաներ վճարելու՝ հետ միաժամանակ սպառողական ընկերութան հաշվապահությունը կատարում է դրանցում անահաշվարկային ձեռնարկությունների զուտ ոգուտի 31%-ի դումարի չափով պարտագրելով № 11— («ներքին հաշվարկներ յենթակա փոխհատուցման» յենթահաշիվ)— և պահանջագրելով № 11 «ներքին հաշվարկներ ըստ մասնահատված միջոցների» յենթահաշիվ):

Տնահաշվարկային ձեռնարկությունները վարչության հաշվապահության տված ծանուցման (ավիդո) հիման վրա կատարում են այդ ձեակերպումը՝ վերը ցույց տրվածին հակառակ կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե շրջկոոպում կա կանոնադրական մթերման դրասենյակ, ապա յեկամասահարկի հաշվարկները վերջինս կատարում է ինքուրույն իր հաշվեկշռի համաձայն՝ ներառյալ մթերման դրասենյակի հաշվեկշռի մեջ մտնող անահաշվարկային ձեռնարկությունները:

Այս հաշիվով հաշվառվում են սպառողական ընկերութան կողմից այլ կազմակերպություններին տրված յերկարատե փոխառությունները: Վորպես կանոն սպառողական ընկերություններն այլ կազմակերպություններին չպիտի յերկարատե փոխառություններ տան, դրա համար էլ այս յենթահաշիվով հիմնականում պիտի հաշվառվեն վերադաս մարմիններին իրացման համար հանձնված պետական փոխառության 8%-ային պարտատոմսերը (տես «արժեքավոր թղթեր» յենթահաշիվ պարզաբանումները):

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՇՎԻՆ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՅԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐ»

Այս յենթահաշիվով կարող են ոգուտել միայն այն սպառողական ընկերությունները, վորոնք հիմնական ֆոնդ չունեն:

«Հիմնական ֆոնդի հաշվին դուրս դրման յենթակա դումարներ» յենթահաշիվը (հիմնական ֆոնդի բացակայության դեպքում) սրարտագրվում է՝

- ա) № 25 «հիմնական միջոցների մաշում» հաշվի պահանջին հիմնական միջոցների վրա հաշվված մաշումի դումարով ամեն ամիս:
- բ) № 17 «ծախսեր ապազա դործառնությունների հաշվին» հաշվի պահանջին («կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգում» յենթահաշիվ) կապալված հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների ամեն ամիս մարվող բաժնի (մասի) դումարով:
- դ) № 24 «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշվի պահանջին տարվա վերջին նույն այդ «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշվի դերետային սալդոյի փոխանցումով:

«Հիմնական ֆոնդի հաշվին դուրս դրման յենթակա դումարներ» յենթահաշիվը պահանջագրվում է № 18 «ֆոնդեր» հաշվի պարտքին («հիմնական ֆոնդ» յենթահաշիվ)— սպառողական ընկերութան հիմնական ֆոնդ կազմելու կապակցությամբ:

«Հիմնական Փոնդի հաշվին դուրս գրման յենթակա գու-
մարներ» յենթահաշվին վոչ մի դեպքում չեն կարող փոխանց-
վել գյուղկոտայի այն վնասները, վորոնք հաշվառվում են «ո-
գուտներ և վնասներ» յենթահաշվով:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ԴԻՐԵԿՏՈՐԻ ՖՈՆԴԻՆ
ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ»**

Այս յենթահաշվով ոգավում են միայն այն սպառողական
ընկերությունները, վորոնք թույլատրվում է դիրեկտորի Փոն-
դին հատկացումներ անել:

Այս յենթահաշվով հաշվառվում են սպառողական ընկե-
րությունների կողմից դիրեկտորի Փոնդին ավանսով արվող
հատկացումները (հրահանգով սահմանված չափերով):

«Հատկացումներ դիրեկտորի Փոնդին հաշվետու տարվա ըն-
թացքում» յենթահաշվի վարտադրվում է դիրեկտորի Փոնդին
արվող հատկացումների գումարով՝ պահանջադրելով № 18
«Փոնդեր» հաշիվը («դիրեկտորի Փոնդ» յենթահաշիվը):

«Հատկացումներ դիրեկտորի Փոնդին հաշվական տարվա
ընթացքում» յենթահաշիվը պահանջադրվում է հաշվական տա-
րին վերջանալուց հետո անցյալ տարիների ոգուտների բաշխման
ժամանակ ավանսի կարգով կատարված հատկացումների գու-
մարի (այդ հաշիվ առ 1-ն հունվարի սալգոն) — պարտադրումով
№ 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվը («անցյալ տարի-
ների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվով):

ՀԱՇԻՎ № 23 «ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՅԵՎ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ»

№ 23 հաշիվը նախորդված է սպառողական ընկերության
տնտեսական դործունեյության հետևանքների հաշվառման հա-
մար:

№ 23 «կորուստներ և կուտակումներ» հաշիվն ունի հետեւ-
յալ յենթահաշիվները՝

1. Չանադան կորուստներ և կուտակումներ
2. Հաշվական տարվա ոգուտներ և վնասներ
3. Անցյալ տարիների ոգուտներ և վնասներ:

**ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՉԱՆԱՉԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՅԵՎ
ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ»**

Այս յենթահաշիվ անալիտիկ հաշվառումը տարվում է ո-
գուտների և վնասների աղյուսակում բերված հաշվային նոմեն-
կլատուրային համապատասխան: (Այս յենթահաշիվի հողվածնե-
քի նոմենկլատուրան տես սույն ձեռնարկի սկզբում՝ հաշվային
պլանի մեջ):

«Իրացված հավելում ըստ առևտրի» հողվածը նշանակված
է սպառողական ընկերության մանրածախ ձեռնարկություննե-
րում ապրանքների իրացումից ստացված համախառն (վալավոյ)
յեկամուտի հաշվառման համար: «Իրացված հավելում ըստ ա-
ռևտրի» հողվածը պահանջադրվում է ամեն ամիս պարտադրե-
լով № 6 «հավելումներ ապրանքի վրա» հաշիվը («հավելում
ապրանքների վրա մանրածախ ձեռնարկություններում» յենթա-
հաշիվ) — մազազինների ու խանութների միջին տոկոսով հան-
ված իրացված հավելումի գումարով:

Միջին տոկոսով իրացված հավելումը վորոշելու համար
անհրաժեշտ է ամսի սկզբին ապրանքների մնացորդի վրա յե-
ղած հավելումի գումարին ավելացնել հաշվետու ամսվա ընթաց-
քում մուտք յեղած բոլոր ապրանքների հավելումի գումարը և
ստացած գումարը բաղմապատկել հարյուրի վրա և բաժանել
ամսվա ընթացքում ստացված ապրանքների գումարի վրա:
(Ներառյալ նաև հաշվետու ամսի սկզբին ապրանքների մնացոր-
դի գումարը): Կիրառելով այդ տոկոսը ամսի վերջին ունեցած
ապրանքների մնացորդի գումարի վերաբերմամբ, այս կերպ
մենք վորոշում ենք ապրանքների մնացորդի վրա յեղած հավե-
լումի գումարը: Այդ գումարի և ամսի վերջում ըստ դրքերի
հավելումի մնացորդի մեջ յեղած տարբերությունը հենց իրաց-
ված հավելումն է, վորը № 6 «իրացված հավելում» հաշիվից
դուրս է գրվում վերը ցույց արված կարգով:

Միջին տոկոսով հանված իրացված հավելումի գումարը
հաշվետու յեռամսյակի վերջում ճշտվում է «հավելումներ ապ-
րանքների մնացորդի վրա» հաշիվի մեջ թողնելով ըստ առան-
ձին ապրանքների փաստական այն հավելումը, վորը վորոշվում
է յեռամսյակի վերջում կատարված ինվենտարիզացիայի ցուցակ-
ների հիման վրա:

Յեթե ինվենտարիզացիոն ցուցակները հիման վրա ըստ առանձին ապրանքների, ապրանքների մնացորդների վրա յեղած հավելումների դումարը ավելի բարձր և այն սալդոյից վորը № 6 «հավելումներ ապրանքների վրա» հաշվի յեռամսյակային հաշվետվութունն և ցույց տալիս—այդ նշանակում և, վոր իրացված հավելումը դուրս և բերված ավելի մեծ չափով, քան հարկավոր և: Այս դեպքում անհրաժեշտ և տալ ստորին դրանցում (վորով կպահասի իրացված հավելումի դումարը) պարտադրելով № 23 «կորուստներ և կուտակներ» հաշվը («դանադան կորուստներ և կուտակումներ» յենթահաշվի «իրացված հավելում ըստ առևտրի» հոդվածով)— պահանջադրելով № 6 «հավելումներ ապրանքների վրա» հաշվը:

Յեթե «հավելումներ ապրանքների վրա» հաշվի դրքային (դրքի) սալդոն ավելի մեծ լինի քան ինվենտարիզացիոն ցուցակների հիման վրա ապրանքների փաստական մնացորդների վերաբերմամբ հանված հավելումի դումարը այդ նշանակում և, վոր իրացված հավելումը թերահաշվառված և և այդ կապակցութամբ անհրաժեշտ և կատարել լրացուցիչ ձևակերպում, պարտադրելով № 6 «հավելումներ ապրանքների վրա» հաշվը և պահանջադրելով № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվը («իրացված հավելում ըստ առևտրի» հոդվածով):

Մթերման ապրանքների իրացումից համախառն յեկամուտ» հոդվածով հաշվառվում և սպառողական ընկերութայն վերադաս կազմակերպութայններից մթերման ապրանքների հանձնման դիմաց ստացած կամ իսիոն վարձատրութայնը:

Ամսյա ընթացքում ապրանքների բաց թողնման արժեքի (վոր ցույց և տրված սպառողական ընկերութայն հանձնած ապրանքների հաշիվներում) և մթերման արժեքի տարբերութայնը արտացոլում և «ապրանքների իրացում» հաշվում («մթերման ապրանքների իրացում» յենթահաշվում):

Ամսի վերջում «մթերման ապրանքների իրացում» յենթահաշվի սալդոն փոխանցվում և № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվին («մթերման ապրանքների իրացումից համախառն յեկամուտ» հոդված):

«Հարկեր և տուրքեր» հոդվածով ձևակերպվում են սպառողական ընկերութայն վճարած բոլոր հարկերն ու տուրքերը

բացառութամբ շրջանառութայնից վճարվող հարկից և ոգուտից վճարվող յեկամտահարկից:

«Տուղանքներ և տույժեր վճարված» հոդվածով հաշվառվում են բոլոր վճարված տուղանքներն ու տույժերը, բացառութամբ փաստաթղթայտույտի կանոնների խախտման համար վճարված տուղանքները, վորոնք արտացոլում են № 8 «Շրջանառութայն ծախսեր» հաշվում («ընդհանուր շրջանառութայն ծախսեր» յենթահաշվով):

«Տուղանքներ և տույժեր ստացված» հոդվածով հաշվառվում են սպառողական ընկերութայն այլ կազմակերպութայններից ստացած առանց բացառութայն բոլոր տուղանքներն ու տույժերը: Ոժանդակ դրքում անհրաժեշտ և ապահովել հաշիվների վոր ժամանակին փրկադրման համար վճարված տուղանքների ու տույժերի (առանձին սպառողական կազմակերպութայններին և այլ հիմնարկներին ու ձեռնարկութայններին) ինչպես և № 23 հաշվով հաշվառվող բոլոր այլ տուղանքների ու տույժերի անջատ հաշվառումը:

«Ապրանքների գնանվազուրդ գնման արժեքից ավելի ցածր» հոդվածով հաշվառվում և ապրանքների գների այն իջեցումը, վորը չի ծածկվում այդ ապրանքների հավելման դումարով:

Հավելումների սահմաններում գների իջեցումը դուրս և գրվում № 6 «հավելումներ ապրանքների վրա» հաշվի պարտքին:

Փինտողկումատի հաշվին ընդունվող գների իջեցումը ձևակերպվում և № 9 «Դերիտորներ և կրեդիտորներ» հաշվի պարտքին («տնտեսական կազմակերպութայններ, հիմնարկներ և անձինք ըստ դանադան հաշվարկների» յենթահաշվով)— տեղական Փինմարմնի անձնական հաշվին:

«Ինվենտարիզացիայի ժամանակ հայտնաբերված ավելցուկ արժեքներ» հոդվածով հաշվառվում են այն բոլոր ավելցուկ արժեքները, վորոնք հայտնաբերված են նյութապես պատասխանատու անձերի մոտ ինվենտարիզացիա կատարելու ժամանակ՝ բացառութամբ հիմնական միջոցների ավելցուկները, վորոնք ձևակերպվում են «հիմնական ֆոնդ» յենթահաշվի պահանջադրումով:

«Ըստ պակասորդների վիճելի պարտքերի ռեզերվացում» հոդվածով դրանցումներ կարող են կատարվել միայն տարեվեր-

չին՝ տարեկան յեղրափակիչ հաշվեկշիռ կազմելու ժամանակ :

Այդ հոդվածով ձևակերպվում են պակասորդներին վերաբերվող վիճելի պարտքերի դեմաց կազմվող ռեզերվի դումարները :

Այս դեպքում ձևակերպում կատարելիս (տվյալ հոդվածով) № 23 «կորուստներ և կուտակումներ» հաշվը պարտադրվում է № 19 «ռեզերվներ ըստ վիճելի պարտքերի» հաշվի պահանջազրույցով—(ըստ պակասորդների) (տես այս հաշվին վերաբերվող պարզաբանումները) :

«Ռեզերվացում այլ վիճելի պարտքերի» հոդվածով հաշվառվում են այլ վիճելի պարտքերի հաշվին կազմված ռեզերվների կորուստները :

«Կորուստներ պարտքերի դուրս գրումից ըստ պակասորդների, վորոնց դանձումը դատարանի կողմից մերժված է» և «կորուստներ այլ պարտքերի դուրս գրումից, վորոնց դանձումը դատարանի կամ արբիտրաժի կողմից մերժված է» հոդվածներով հաշվառվում են այն կորուստները, վորոնք կապված են այն դերխտորական պարտքերի դուրս գրման հետ, վորոնց վերաբերմամբ դատարանի կամ արբիտրաժի կողմից մերժման վորոշում է հանված :

«Կորուստներ պարտքերի դուրս գրումից քաղաքացիական վաղեմության ժամկետի անցման հետևանքով» հոդվածով հաշվառվում են այն կորուստները, վորոնք կապ ունեն քաղաքացիական վաղեմության ժամկետի անցման հետևանքով վնասների հաշվին դուրս գրվող վերխտորական հաշիվների հետ :

«Կորուստներ այլ անհուսալի պարտքի դուրս գրումից» հոդվածով (ասանձին ըստ պակասորդների, ըստ վատնումների և ըստ այլ հաշվարկների)— հաշվառվում են այն անհուսալի պարտքերի դուրս գրումների կորուստները, վորոնց վերաբերմամբ չի անցել քաղաքացիական հայցի ժամկետը և քաղաքացիական հայցի մերժման մասին դատարանի կամ արբիտրաժի վորոշումը չկա :

Անհուսալի վերխտորական պարտքերի կորուստների դուրս գրումը կարող է կատարվել միայն վերադաս մարմինների թյուրաբանությամբ :

«Կորուստներ գողութուններից և կողոպուտներից» հոդվածով հաշվառվում են այն վնասները, վորոնք առաջ են յեկել

գողութունների ու կողոպուտների հետևանքով՝ յերբ վնասների դումարը չի կարող դանձվել :

«Կորուստներ անցյալ տարիների հայտնաբերված հաշվետու տարում և յեկամուտներ անցյալ տարիների հայտնաբերված հաշվետու տարում» հոդվածներով հաշվառվում են այն բոլոր վնասներն ու յեկամուտները, վորոնք վերաբերվում են անցյալ տարիների դործառնություններին, սակայն հայտնաբերված են հաշվետու տարում :

«Կորուստներ անցյալ տարիների հայտնաբերված հաշվետու տարում» հոդվածով վոչ մի դեպքում չեն կարող անցկացվել փոխհատուցումները և աշխատավարձի այլ տեսակները, վորոնք հաշվետու տարում վճարվում են անցյալ տարիների համար : Այդ ծախսը պիտի արտացոլի № 8 «չրջնանության ծախսեր» հաշվում կամ № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվում (ըստ պատկանելույն), անկախ այն բանից, թե չուսուղործված արձակուրդի փոխհատուցումը վոր ժամանակի համար է վճարվում :

«Յեկամուտներ չողտադործված հատուկ ֆոնդերի լիկվիդացիայից» հոդվածով հաշվառվում են հատուկ ֆոնդերի այն դումարները, վորոնք վերադաս կազմակերպությունների կարողաբությամբ յենթակա յին փոխանցման յեկամուտների հաշվին : Այսպիսի դուրսգրումները կարող են կատարվել միայն վերադաս կազմակերպությունների հատուկ ցուցումներով :

Վոչ մի դեպքում այդ հոդվածով չպիտի արտացոլվեն կապիտալ ներգրումներում ողտադործված հատուկ ֆոնդերի փոխհատուցումները, վորովհետև այս դեպքում ողտադործված հատուկ ֆոնդերը պետք է փոխանցվեն հատուկ ֆոնդին :

«Յեկամուտներ չողտադործված ռեզերվների լիկվիդացիայից» հոդվածով հաշվառվում են յեկամուտներին դրանցված ռեզերվների դումարները՝ վիճելի պարտքերի հայցի ողտոտղական ընկերության ողտին վճուելու կապակցությամբ կամ տարեվերջին վիճելի պարտքերի ռեզերվի ամբողջ այն դումարը, վորոնց վերաբերմամբ դործերը մինչև տարվա վերջը դատարանի կամ արբիտրաժի կողմից չեն վճուված :

«Մուտքեր անցյալ տարիներում անհուսալության պատճառով վնասների հաշվին դուրս գրված պարտքերից» հոդվածով ցույց են տրվում այն յեկամուտները, վորոնք ստացված են

անցյալ տարիներում դուրս գրված դեբիտորական պարտքերի դանձումից:

Յեկամուտներ «Ժամկետանց կրեդիտորական պարտքերի լիկվիդացիայից» հոդվածով հաշվառվում են այն կրեդիտորական պարտքերի դուրս գրումից ստացված յեկամուտները, վորոնց քաղաքացիական վազեմության ժամկետն անցել է: Վսչ մի դեպքում չի թույլատրվում յեկամուտների հաշվին գրել այն կրեդիտորական պարտքերը, վորոնց վերաբերմամբ դորժը գտնւրվում է դատարանում կամ արբիտրաժում կամ վորոնց համար կատարողական թերթ է ստացված:

«Կորուստներ տարերային աղետներից» հոդվածով հաշվառվում են տարերային դժբախտութունների հետևանքով առաջացած բոլոր վնասները (փոթորիկ, հեղեղ, հրդեհ), բացի հիմնական միջոցների կորուստներից— յեթե այդ վնասները վորուկե մասով չեն փոխհատուցվում Պետապլի կողմից:

«Յեկամուտներ նյութերի, տարայի և ոգտադործելի մնացորդների ուսալիդացիայից» հոդվածով հաշվառվում են նյութերի և ոգտադործելի մնացորդների այլ կազմակերպությունների իրացումից ստացած յեկամուտները (բացի արտադրական ձեռնարկների մնացորդներից, վորոնք գրանցվում են արտադրական ծախսումների կրճատման հաշվին): Բացի այդ՝ այս հոդվածով հաշվառվում են տարայի ուսալիդացիայից ստացված յեկամուտները, յերբ վերջիններս դերազանցում են տարայի վերաբերվող կորուստները, վորոնք հաշվի յեն առնվում № 8 «չրջանառության ծախսեր» հաշվով: (Տես չրջանառության ծախսերին վերաբերվող հրահանգը):

«Հետևանքներ ձեռնարկությունների շահագործումից» հոդվածով հաշվառվում են սպառողական ընկերության արտադրական և ոժանդակ ձեռնարկությունների շահագործումից ստացած համախառն (վալավոյ) ոգուտը կամ վնասը, այլ և հատարական սննդի ձեռնարկությունների շահագործումից ստացված ոգուտը կամ վնասը (ուես № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվի պարզարանումները):

Սնալիտիկ հաշվառման մեջ անհրաժեշտ է առանձին-առանձին արտացոլել առանձին ձեռնարկությունների հետևանքները:

Ներտնտեսական հատկացումներ» հոդվածով հաշվառվում են սպառողական ընկերության տնտեսաշարհային առևտրական

ու մթերման ձեռնարկությունների հատկացումները վարչության ծախսերը ծածկելու համար: Այս հոդվածով արտադրական ընկերության առևտրական ու մթերման ձեռնարկությունները ցույց են տալիս այն ներտնտեսական հատկացումների դումարները, վոր նրանք վճարել են կազմակերպության վարչությանը:

Սպառողական ընկերության վարչությունն այդ դումարները ցույց է տալիս վորպես ստացված (յեկամուտներ):

Սպառողական ընկերության արտադրական ձեռնարկություններում հատկացումները (վճարված) այս հոդվածով չեն ձևակերպվում, վորովհետև նրանք պետք է մանեն պատրաստի արտադրանքի ինքնարժեքի մեջ (սահմանված նորմաներով), ընդ վորում այդ դուրս գրումները № 16 «ձեռնարկությունների շահագործում» հաշվով կատարվում են անկախ այն բանից, թե ուր ձև ձեռնարկությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ թե վոչ:

Սպառողական ընկերության վարչությունն իր հաշվեկշիռով արտադրական ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ մտցրված ներտնտեսական հատկացումները ցույց է տալիս «ներտնտեսական հատկացումներ» հոդվածով (վորպես յեկամուտ): «Այլ կորուստներ» և «այլ կուտակումներ» հոդվածներով հաշվառվում են այն դանազան կորուստներն ու կուտակումները, վորոնք չեն կարող արտացոլվել վերև թված հոդվածներից և վոչ մեկում:

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՈԳՄԻՏՆԵՐ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ»

Այս յենթահաշվով հաշվառվում են հաշվետու տարվա դործառնությունների վերջնական հետևանքները (ոգուտը կամ վնասը):

Հաշվետու տարվա վերջին յեզրափակման հաշվեկշիռ կազմելիս այս յենթահաշվին են փոխանցվում № 8 «Շրջանառության ծախսեր» հաշվի և «այլ կորուստներ և կուտակումներ» յենթահաշվի ոսալը:

«Հաշվետու տարվա ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը նախքան յեզրափակիչ հաշվեկշիռ կազմելը պարտադրվում է № 8 «Շրջանառության ծախսեր» հաշվի պահանջին— հաշվական տարվա դործառնությունների չրջանառության ծախսերի դու-

մարտի (բացի սպրանքների մնացորդի վրա ընկնող շրջանառութեան ծախսերից, փորոնք փոխանցվում են № 17 «ծախսերի և հաշիվ սպառա գործառնությունների» հաշվին) և «այլ կորուստներ» պահանջադրումով՝ «այլ կորուստներ և կուտակումներ» յենթահաշիվում հաշվի առնված վնասների դումարով (լրտ առանձին հոդվածներ) :

«Հաշվետու տարվա ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը պահանջադրվում է «Այլ կորուստներ և կուտակումներ» յենթահաշիվի պարտքին վերջինում հաշվի առնված յեկամուտների դումարով (լրտ առանձին հոդվածներ) :

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ «ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՈԳՈՒՏՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՆԵՐ»

Այս յենթահաշիվում արտացոլվում են նախորդ տարիների գործառնությունների հետևանքները :

«Նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը բացվում է հաշվետու տարվան հետևող տարվա սկզբին, նրանում դրանցելով յեզրափակիչ հաշվեկշռի «հաշվետու տարվա ոգուտներ և վնասներ» յենթահաշիվում ցույց տրված դումարները : Հաշվետու տարվա ոգուտների և վնասների գրանցումները կատարել «անցյալ տարիների ոգուտների և վնասների» յենթահաշիվում չի թույլատրվում :

Յեթե նոր վերջացած գործառնական տարին ունեցել է ոգուտ, ապա այդ ոգուտով փոչ մի դեպքում չի կարող ծածկվել նախորդ տարիների հաշվեկշիռներով դուրս գրված վնասները, այս դեպքում անհրաժեշտ է անցյալ տարվա ոգուտը հաշվառման մեջ արտացոլել առանձին մինչև վոր այդ ոգուտը կբաշխվի Յենտրոստյուդի և փայտերերի հաշվետու ժողովի կողմից սահմանված նորմաներով :

«Նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը պարտադրվում է ոգուտների բաշխման ժամանակ № 22 «Ուրիշներին տրամադրված միջոցներ» հաշվի պահանջադրումով, «Վնասները կամ լրտ յեկամտահարկի ոգուտներից» յենթահաշիվում անցած գործառնական տարվա դուտ ոգուտներից յեկամտահարկի դումարով, № 18 «Փոնդեր» հաշվի պահանջադրումով (անալիտիկ հաշվառման մեջ գրանցումներ են կատարվում համապատասխան յենթահաշիվների պահանջին) — հիմնական ֆոնդին,

պահեստի ֆոնդին և հատուկ ֆոնդերին սահմանված նորմաներով դուտ ոգուտներից հատկացված դումարների չափով :

№ 10 «հաշվարկներ շրջափության հետ» հաշվի պահանջադրումով («հաշվարկներ շրջափության վարչության հետ» յենթահաշիվ) — դուտ ոգուտից 10 0/0-ային հատկացման դումարով շրջափության ոգուտին :

«Նախորդ տարիների ոգուտներ և վնասներ» յենթահաշիվը պահանջադրվում է «պահեստի ֆոնդ» յենթահաշիվի պարտադրումով կամ վերջինիս չբաշխարբելու դեպքում «հիմնական ֆոնդ» յենթահաշիվի պարտադրումով — մարվող վնասների դումարի չափով (յեթե անցյալ տարին վնասով է ավարտվել) :

ՀԱՇԻՎ № 24 «ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԻՎԻԴԱՑԻԱՆ»

Այս հաշիվում հաշվառվում են հիմնական միջոցների լիկվիդացիայի հետևանքները՝ № 24 հաշվի սաղոն ամեն ամիս փոխանցվում է «հիմնական ֆոնդ» յենթահաշիվի պարտքին կամ պահանջին՝ նայած թե սպառողական ընկերությունն ինչպիսի հետևանք է ստացել հիմնական միջոցների լիկվիդացիայից :

№ 24 «հիմնական միջոցների լիկվիդացիան» հաշիվը պարտադրվում է հետևյալ հաշիվների պահանջադրումով՝

ա) № 21 «հիմնական միջոցներ» — լիկվիդացիայի յենթահաշիվով, հիմնական միջոցների սկզբնական արժեքով :

բ) № 1 «դրամարկ» կամ № 9 «դերբիտորներ և կրեդիտորներ» — հիմնական միջոցների լիկվիդացիայի համար կատարված ծախսերի արժեքով — (քանդել, փոխադրել և այլն) :

գ) № 16 «ֆոնդեր» («հիմնական ֆոնդ» յենթահաշիվ) հաշվետու ամսի վերջին կրեդիտային սաղոնի դումարով, № 24 «հիմնական միջոցների լիկվիդացիան» հաշիվը պահանջադրվում է հետևյալ հաշիվների պարտադրումով —

ա) № 25 «հիմնական միջոցների մաշում» — լիկվիդացիայի յենթահաշիվով հիմնական միջոցների վրահաշվված մաշումի դումարով :

բ) № 1 կամ № 2 լիկվիդացիայի յենթահաշիվով հիմնական միջոցների փոխարեն ստացված դումարի չափով :

գ) № 15 «նյութեր» — հիմնական միջոցների քանդելուց ստացված նյութերի արժեքով (разборка) :

դ) № 18 «Փոնդեր» («Հիմնական Փոնդ» յենթահաշիվ) կամ № 22 «ուրիշներին արամադրված միջոցներ» («Ղուճարներ յենթակա դուրս դրման հիմնական Փոնդի հաշվին» յենթահաշիվ) ամսի վերջին «հիմնական միջոցների լիկվիդացիա» հաշվի դերբիտային սալդոյի դումարով:

ՀԱՇԻՎ № 25 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՇՈՒՄ

Հիմնական միջոցների մաշումը ցույց է տալիս հիմնական միջոցների սկզբնական ու բալանային (մնացորդային) արժեքի տարբերությունը, հետևապես № 25 հաշիվը հանդիսանում է կարգավորող (կոնտրակտիվային) հաշիվ № 21 «հիմնական միջոցներ» հաշվի դիմաց: Հիմնական միջոցների մաշումին հատկացումները կատարվում են ամեն ամիս ամօրախրաջիտն Փոնդին արված հատկացումներին հավասար դումարով:

№ 25 «Հիմնական միջոցների մաշում» հաշիվը պահանջադրվում է ամեն ամիս № 18 «Փոնդեր» հաշվի պարտադրումով («հիմնական Փոնդ» յենթահաշիվ) կամ «դումարներ յենթակա դուրս դրման հիմնական Փոնդի հաշվին» յենթահաշիվով (հիմնական Փոնդի լացակայությունից հետևապես) — ամօրախրաջիտն Փոնդին արված հատկացումներին հավասար դումարով:

Սպարողական ընկերության տնտեսաշարժային ձեռնարկություններում հիմնական միջոցների մաշումին հատկացումներ անելիս պարտադրվում է № 11 «ներքին հաշվարկներ» հաշիվը («ներքին հաշվարկներ ըստ հատկացված մասնահատված միջոցներին» յենթահաշիվ) և պահանջադրվում է № 25 «հիմնական միջոցների մաշում» հաշիվը:

Տնտեսաշարժային ձեռնարկության ծանուցադրի հիման վրա սպարողական ընկերության վարչության հաշվապահությունը պարտադրում է «հիմնական Փոնդ» յենթահաշիվը կամ համապատասխանորեն «դումարներ յենթակա դուրս դրման հիմնական Փոնդի հաշվին» յենթահաշիվը պահանջադրելով «ներքին հաշվարկներ ըստ հատկացված միջոցների» յենթահաշիվը:

№ 25 «հիմնական միջոցների մաշում» հաշիվը պարտադրվում է՝

ա) № 24 «հիմնական միջոցների լիկվիդացիան» հաշվի պա-

հանջին լիկվիդացիայի յենթարկվող հիմնական միջոցների մաշումի դումարով:

բ) № 20 «կապիտալ ներդրումներ» հաշվի պահանջին («հիմնական նորոգումներ» յենթահաշիվ) — սեփական (վոչ կապիտալ) հիմնական միջոցների ավարտված կապիտալ նորոգումների դումարով:

ԱՐՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՇՈՒՄ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐ

ԽԻՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՆԿՆԵՐ

Խիստ հաշվառման բլանկներին վերաբերվող դործանությունների հաշվառումը տարվում է բալանային դուրս № 01 «խիստ հաշվառման բլանկներ» (ակտիվային) և 02 «խիստ հաշվառման բլանկներից բաց թողնում» (պասսիվային) հաշվներով:

Խիստ հաշվառման բլանկների հաշվառումը (ուղղնային) դրոշմանիշներ, վրայատիրական դրքույկներ, մթերումների անդորրադրային դրքույկներ, բանվոր ծառայողների աշխատանքային դրքույկներ և այլն) — տարվում է նոմինալ կամ պայմանական դնահատությամբ:

№ 01 հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի և ըստ խիստ հաշվառման բլանկների տեսակների:

№ 02 հաշվի անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ խիստ հաշվառման բլանկների տեսակների:

№ 01 հաշիվը պարտադրվում է № 02 հաշվի պահանջադրումով խիստ հաշվառման բլանկների ստացման հետ միասին:

№ 01 հաշիվը պահանջադրվում է № 02 հաշվի պարտքին խիստ հաշվառման բլանկների ծախսման հետ միասին:

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐ

Պահպանության ընդունված արժեքների, նյութերի ու այլ արժեքների հաշվառումը ինչպես և պահպանության ընդունված ապրանքների ու նյութերի վերաբերմամբ կազմակերպությունների հետ հաշվարկների հաշվառումը տարվում է բալանային դուրս № 03 «պահպանության ընդունված արժեքներ» և № 04

«կազմակերպութիւններ ըստ պահպանման ընդունված արժեքները» հոգւածներով:

Պահպանման ընդունված արժեքների հաշվառումը ստարվում է պայմանադրով սահմանված գներով, իսկ յեթե պայմանագրով գներ չեն սահմանված, ապա սպառողական ընկերութեան սահմանած գներով:

№ 03 հաշիւի անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի, պահպանման ընդունված արժեքների տեսակների և ըստ դումարի (իսկ նյութերի և այլ արժեքների վերաբերմամբ նույնպէս և քանակով):

Փաստաթղթերի ձևակերպման, դյուրզկոտպին պատկանող ապրանքանյութային արժեքների վերահսկողութեան և ինվենտարիզացիայի կանոնները հավասար չափով տարածվում են նաև դյուրզկոտպի կողմից պահպանման ընդունված արժեքները վրաս:

№ 03 հաշիւը պարտադրվում է № 04 հաշիւի պահանջադրումով — պահպանման ընդունված ապրանքների ստացման դեպքում:

№ 03 հաշիւը պահանջադրվում է № 04 հաշիւի պարտադրումով այդ արժեքների վերադարձման կամ նրանց դյուրզկոտպի սեփականութեան հանձնվելու դեպքում:

ԿԱՊԱՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ

Սպառողական ընկերութիւններում կապւլված հիմնական միջոցների հաշվառումը տարվում է բալանսից դուրս № 05 «կապւլված հիմնական միջոցներ» և № 06 «կապւլատուներ» հաշիւներով:

«Կապւլված միջոցների հաշվառումը տարվում է կապւլային պայմանադրում ցույց տրված գնով, իսկ վերջինիս բացակայութեան դեպքում սպառողական ընկերութեան վարչութեան կողմից սահմանված պայմանական գնահատումով (որինակ՝ սպահովագրական գնահատումով):

№ 05 անալիտիկ հաշվառումը տարվում է ըստ նյութապես պատասխանատու անձերի, ըստ հիմնական միջոցների տեսակների քանակով և դումարով:

№ 06 հաշիւի անալիտիկ հաշվառումը տարվում է առանձին ըստ յուրաքանչյուր կապւլատուլի:

№ 05 հաշիւը պարտադրվում է № 06 հաշիւի պահանջադրումով կապւլված հիմնական միջոցները ստանալիս:

№ 05 հաշիւը պահանջադրվում է № 06 հաշիւի պարտադրումով կապւլատուին ակտով կապւլված հիմնական միջոցները հանձնելիս:

115

«Ազգային գրադարան»



NL0299299

24.851

H | Apm.
| 3-4400 a